5

789-շէհ
Printed in Turkey
9359-5Հ/1262

# ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

## ՍՐԲՈՑ ՊԱՏԱՐԱԳԻՆ

ԸՍՏ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԵԿԵՂԵՑՒՈՑ

*Համեմատ օրինակին տպելոյ 'ի Հռոմ՝ 1677։*

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ
1823

264



Արժան ըցին արքայութեան․
որք աստ յաւէտ գնա խո կան ։

Printed in Turkey

Ժամամուտ ըստ չորից աւուրց պահոց, տօնից տէրունականաց, և ամենայն սրբոց։

## Պահոց։

Որ 'ի հօրէ առաքեցար փրկիչ՝ և մարմնացար 'ի սբ՟ կուսէն. որ վասն մեր 'ի յերկնից իջեր՝ և լուսաւորեցեր ըզտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ տր՟, որ խաղաղութեանց ես թագաւոր. զխաղաղութիւն և զողորմութիւն. որ յամ՟ի ես դու կարող՝ մարդասէր։

## Չորեքշաբթի. և Ուրբաթ։

Որ ըստ ամենայն միտս անցանես, զխաղաղութիւն քո ած՟՝ տուր մեզ հանապազ՝ զքեզ աղաչեմք։

## Մարտիրոսաց։

Ի տաճարի սրբոց, և յիշատակի սբ՟ց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութբ՟ սոցա և աղօթիւք զկենդանութիւն մեր խաղաղացո ած՟, որպէս մարդասէր։

## Ճգնաւորաց։

Ճգնաւորք քոյ, որք տանջանաց անօրինացն համբերեցիք. և զմոլութիւն կռոցն խա-

փառնեցիք, դասաւորեալք ընդ հրեշտակս 'ի յերկինս. որք ունիք զհամարձակութիւն 'ի քսէ, բարեխօսեցէք կեցուցանել զանձինս մեր. զձեզ աղաչեմք:

Կիւրակէի :

Միածին որդի և բանդ ած, և անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ 'ի սրբուհւոյ ածածնէն և 'ի միշտ կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար քս ած. մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ 'ի սբ երրորդութէն փառաւորակից ընդ հօր և ընդ սբ հոգւոյն. կեցո՛ զմեզ:

Ստեփաննոսի :

Ցնծա՛ այսօր՝ ցնծա՛ և զուարճացիր կաթուղիկէ եղ՝ յիշատակաւ սբյն ստեփաննոսի նախավկային քսի՝ վկայեցելոյ հօր. որ աղօթիւք բանայր զերկինս, զոր փակեաց ադամ. և հրեշտակակերպ տեսլեամբ տեսանէր զկերպարանն հօր 'ի կերպի ադամայ նստեալ յաթոռ փառաց. որ զբազմութիւն քարանցն որպէս զծաղիկս հաւաքելով բոլորէր պսակս փոխանակ փշոցն և եղեգանն: Նա զմարտիրոսական արիւնն խառնէր ընդ փրկական արեանն քսի հանեցելոյն 'ի կողէն: Վասն որոյ գերազանցեալ 'ի փառս առաւել քան զամենայն սբս՝ հայցեա՛ և մեզ 'ի վերնատուողէն զպարգևս կենաց անխախճանից՝ և զմեծ զողորմութիւն:

Ստեփաննոսի ։

Յորովայնէ ընտրեալ՝ որ ստեփաննոս, յորովայնէ ընտրեալ՝ որ ստեփաննոս, վկայ ճշմարիտ առաքելական քարոզութեանցն. որ 'ի վերայ անօրէն քարաձգողացն աղօթէիր առ քո Տէր՝ մի համարիր սոցա զայս 'ի մեղս. 'ի ձեռն սորին բարեխօսութեամբն շնորհեա մեզ զմեծ քո ողորմութիւն ։

Ողորմեա ։

Աստուածածին անհարսնացեալ, զբանն անսկիզբն յղացար, և զԱստուածն անիմանալին ծնար. զանպարագրելին 'ի գիրկս քո բարձեր, նմա անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց ։

Ողորմեա ։

Աստուածածին զքեզ խոստովանեալ երկրպագէ եկեղեցի ուղղափառաց, քանզի ուր քերովբէքն բազմաչեայք և աթոռք հրամանութք և վեցթեւեան սերովբէքն նայիլ ոչ իշխէին, կրեցեր անսերմնաբար յանապականութիւն 'ի յարգանդի քում որպէս աղախին զՏէր, և ծնար որպէս մարդ զԱստուածն բոլորից զմարմնացեալն առ 'ի քէն՝ զանճառ զբանն, 'ի փրկութիւն աշխարհի և կեանք անձանց մերոց ։

Ողորմեա ։

Աղաչեմք զքեզ որ կոյս մարիամ Աստուածածին. բարձրելոյն զօրութեամբն հովանաւորեալ, և որ

հոգւոյն եկաւորութե՟ն լուսաւորեալ. որ զա-
մենայն գոյութե՟ց զստեղծիչն յղացեալ ծնար
անճառապէս. մարմնացելոյն առ 'ի քէն բա-
րեխօսեա՛ կեցուցանել զանձինս մեր :

Սեդուծէ :

Ծերունին այսօր սիմէոն՝ հոգւովն գայր 'ի
տաճարն, երեւելով քերովբէիցն վեհագոյն.
որոց թեւօքն սաւառնեալ ոչ իշխէին նայիլ 'ի
յահեղ փառացն. սա 'ի գիրկս իւր բարձեալ
համբուրէր համարձակապէս. եւ գգուէր որ-
պէս զմանուկ. եւ աղերսելով հայցէր արձակիլ
'ի խաղաղութիւն :

Տեառն ընդառաջին :

Անսկզբնական բանդ ա՟ծ 'ի վերջին աւուրս
յանձն առեր լինել մարդ 'ի կուսէն, եւ արա-
րիչդ յաւիտենից փակեցար ընդ ժամանա-
կաւ, ս՟բ. տ՟ր սրբութե՟ց, եւ անկարօտ մաքրու-
թե՟ց. եկիր 'ի տաճարն քառասնօրեայ զօրի-
նացն կատարեցեր զարդարութիւն. զոր բար-
ձեալ սիմէոնին զանպարագրելիդ 'ի գիրկս իւր՝
հայցէր. որ արձակիչդ ես կապելոց՝ արձակեա՛
զիս 'ի խաղաղութի: Ա՟ռ որոյ ընդ ծերունւոյն
սիմէոնի վերագոչեմք առ քեզ տ՟ր. ս՟բ՝ ս՟բ՝ ս՟բ՝
տ՟ր զօրութե՟ց. լի են երկինք եւ երկիր փառօք
քո 'ի փրկութի մեղ՝ ք՟ս ա՟ծ. փառք քեզ :

Զօրավարաց :

Զօրական եւ վկայ ճշմարիտ՝ քաջ նահա-
տակդ ք՟ի ս՟բդ թէոդորոս. որ փոխանակեցեր

զմարմինդ ընդ հոգւոյդ քում փրկանս. և ոչ ածեր զմտաւ զպատուհանալեան մաքսմիանոսի թագաւորին. այլ վերին ազդեցութեամբն՝ դիտելով զայրեցումն հոգւոց նոցա, վասն այնորիկ լուցեր զտաճար կուոց նոցա։ Արդ՝ 'ի յաղթող պատերազմի տօնողացս զօր նահատակութեան քոյ՝ բարեխօսեա առ տէր վասն անձանց մերոց։

Շարական մանկանց մարտիրոսաց։

Գնալով փառաց քոց 'ի փառս կաթուղիկէ եկեղեցի, դիմեալք 'ի սերաստիա վերին. ուր թագաւորեալքն յոյն նահատակին 'ի յամօթ և 'ի քարընկէց յերեսս բանսարկուին. քաջալերելով զմիմեանս, զի մի լուծեալ ոք բաղանեօք անցաւորիս՝ պակասեսցի. այլ դողալով առաքինաբար զմեքն ըղերձեալ յանխուս մեծայլին գանձուցն հոլովիցի, աղաղակելով առ քեզ, ընկալ զորդեգրութիւն ժողովոյս մերոյ 'ի յոյս սիրողաց քոց. տէր փառք քեզ։

Գ. Տաղաբան։

Զղազարու զննջումն որպէս կանխագէտ յառաջ ասէիր. զի և 'ի բեթանիայ յառաջէիր. զի յարուցես զսիրելին քո. և քեզ գոչելով ասեմք՝ օրհնեալ որ գաս 'ի չարչարանս կամաւ հօր 'ի փրկութիւն անձանց մերոց։

Գ. Տաղաբան։

Յորժամ եկեալ կենարարն 'ի գերեզմանն ղազարու՝ յորժամ եկեալ կենարարն 'ի գե-

րեզմանն ղազարու՝ աւետաւոր ձայնիւն աղաղակէր ասելով. ղազարէ արի եկ արտաքս։ Իսկ մեռեալն 'ի գերեզմանէն յարեաւ. և նոյն ինքն զանմահութեն պարգևեան ետ սիրելւոյն. և ա̃ծային ձայնիւն 'ի գերեզմանէն կոչեաց. վասն որոյ և մանկունք եբրայեցւոց՝ ոստովք օրհնէին զանմահ թագաւորութիւն քո. ովսաննա օրհնեալ է գալուստ քո՝ օրհնութիւն 'ի բարձունս. օրհնեալ որ գալոցդ ես անուամբ տեառն։

## Ծաղկազարդէն։

Ցնծա երուսաղէմ, և զարդարեա զառագաստ քո սիոն. քանզի ահա թագաւոր քո քո նստեալ 'ի յաւանակի նորոյ հեզութեն յուցանելով և գայ մտանէ յառագաստ քո սիոն, և մեք աղաղակեմք՝ ովսաննա օրհնեալ եկեալ 'ի յանուն տ̃ն. որ ունի զմեծ ողորմութիւն։

## Օրհնէն։

Որ յարեաւ 'ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց, և յարութե̃ իւրով մեզ կեանս պարգևեաց. նմա փառք յաւիտեանս ամէն։

## Յերկնից։

Ահաւոր և սքանչելի է խորհուրդ փրկութեն մերոյ. որ անչափելին 'ի հօրէ անճառաբար մարմնացաւ 'ի կուսէն, խաչի համբերելով, և

կամաւոր մահուամբ իւրով զկենդանութեան
մեզ պարգեւեաց շնորհս :

Յինանցն :

Քանզի յարեաւ ՚ի մեռելոց ք̃ս ա̃ծ յաւիտենից արարիչ, եւ յարութիւն ազգի մարդկան . զոր օրհնեն անդադար զինուորութի̃ք հրեշտակաց, եւ ամենայն զուարթունք երկնից . ընդ որս գոչելով ասեմք . փառք սոսկալի յարութեան քո տ̃ր :

Համբարձման :

Հիացան վերնական բազմութի̃քն տեսանելով զքեզ ՚ի հրեղէն կառս բազմեալ՝ սարսեալ ասէին, ո՞վ է սա՝ որ դիմեալ գայ յեդոմայ, եւ եկեալ մտանէ փառօք ՚ի փառս . տէր փառաց քեզ :

Համբարձման :

Որ յանպատում յաթոռ նստիս՝ եւ յանմարմնոց վերօրհնիս, անհասանելի բանդ ա̃ծ, ՚ի յերկրի երեւեցար ճշմարիտ մարդ՝ զանօրէնութի̃ն կատարեալ զխորհուրդ . խաչի եւ մահու համբերեցեր . եւ զհրաշալի զյարութի̃դ քո ցուցեր հզօր զօրութ̃բ, այսօր համբարձար փառօք ՚ի յերկինս, եւ զկուսածին զմարմինդ քո հրաշափառապէս լուսազարդեցեր . զոր տեսեալ եսայիաս՝ նախաձայնեալ ասէր, ո՞վ է սա՝ որ դիմեալ գայ յերկրէ . հիացեալ

պետութեանց երկնից՝ գոչէին առ միմեանս․ համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր, և մտցէ Թագաւոր փառաց։ Այլ որ յամի կարօղդ ես՝ և հզօր, շնորհեա և մեզ հանդիպել քեզ ամպովք 'ի միւսանգամ քո գալստեանդ․ որ միայնդ ես մարդասէր։

Հոգւոյ գալստեան։

Մ՟ծ զքեզ խոստովանիմք զտ՟ր հոգիդ՝ և երկրպագանեմք․ որ ես պատճառ կենդանութեան եղելոցս՝ և խաղաղարար աշխարհի․ որ զտգիտութիւն աշակերտացն բազում գիտութեամբ լցեր․ և 'ի հրեղէն լեզուս բաժանեալ անճառելեօք ցուցար նշ՟․ աղաղակեմք տ՟ր, խնայեա և կեցո զմեզ։

Երկուշաբաթի։

Այսօր 'ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար յառաքեալսն լուսաւորելով զնոսա․ և այժմ աղաչեմք զքեզ տ՟ր ա՟ծ՝ որ ես պատճառ կենդանութե՟ն եղելոցս և խաղաղարար աշխարհի, խնայեա և կեցո զմեզ։

Երեքշաբաթի։

Վասն որոյ և մեք զհոգին տ՟ր ը՟ հօր միաւորեալ, և ընդ որդւոյ միաբանական խոստովանիմք․ և հայցեմք 'ի վերնատուողէդ մեզ զհոգևորական զխաղաղութիւնդ․ տ՟ր փառք քեզ։

### Հռիփսիմեանց :

Որք ծագեցան մեզ յարեւմտից որպէս զարեգակն. և լուսաւորեցին համանգամայն զաշխարհս հայաստանեայց, փարատեցին զխաւարն անգիտութեան կռապաշտութեան. և լուսաւորեցին զամենայն հոգի հաւատով ճշմարտութեան. սոցա բարեխօսութեամբ քս ած, պարգևեա աշխարհի քում զխաղաղութիւն. և անձանց մերոց զմեղաց զթողութիւն որպէս մարդասէր ես:

### Գայիանեանց :

Զյաղթական զձեր զհանդէս զուարճացեալ տօնէ եկեղեցի տն. քանզի սրբութեամբ ստացայք զկուսութիւն. և ՚ի մարտին զանմարմնոցն ցուցէք զհանդէս :

### Կուսանաց :

Հարսնացեալք քոյ երկնաւոր փեսային, դստերք վերին սիոնի. խնդրեցէք ՚ի քսէ զհաշտութիւն և զմեծ ողորմութիւն :

### Յովհաննու Մկրտչին :

Զյառաջընթացութիւն քո և զկարապետութիւն ՚ի բանին խափանել կարծելով. որ ՚ի ձեռն կնոջն զնախաստեղծն ՚ի դրախտէն արտաքս ընկէց. նաև այժմ զհերովդիադայ անօրէնութեամբ բորբոքեալ, և բազմելոցն հերովդիայ՝ զկաքաւս ոտից աղջկանն հաճոյացոյց,

զի զքոյդ հատցէ զգլուխ. որ զամենեցուն ձեռնադրեցեր զգլուխն զքո: Այլ դու, որ յանապատէ բարբառոյ ձայն, գոչեա՛ որում ձեռնադրեցեր. պարգևել զխաղաղութիւն և զմեծ զողորմութիւն:

Մարգարէից:

Տէր՝ որ հիմնեցուցեր զեկեղեցի քո 'ի վերայ վիմին հաւատոյ, և կարգեցեր 'ի նմա առաքեալս՝ և մարգարէս. հովիւս և վարդապետս առ 'ի հաստատութիւն սրբոց. և ճգնութեամբ վկայից զթշնամին սորա վանեցեր. 'ի խաղաղութեան զսա պահեա՛ ա̃ծ որպէս մարդասէր:

Առաքելոց:

Առաքեալք և վկայք քո ի̃յ ամենակալ հոգւոյն զօրութբ̃ն զամենեսեան ընդհանուր յորդեգրութիւն կենաց կոչելով միանական ս̃բ երրորդութեան յորդորեցին երգել փառս 'ի յաւիտեանս. ամէն:

Հայրապետաց:

Զհայրապետականն զարդարեցեր զաթոռ 'ի յերկրի. առաքելական առեր զպատիւ յերկնաւոր՝ ծառայ քո ո̃վ երանելիդ 'ի հայրս ս̃բ հայրապետ. քանզի քոյ վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեամբ պտուղ հատուցանելով. և հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով. վասն որոյ բարեխօսեա առ Տ̃ր վասն անձանց մերոց:

Նուիրեցոյց։

Զխաղաղութի՛ շնորհեա՛ եկեղեցւոյ քում սրբոյ. զխաղաղութի՛ և զանշարժութիւն 'ի թշնամեաց պատերազմէ. և հաստատեա՛ 'ի մի հաւատ զկաթուղիկէ եկեղեցի. զքեզ խոստավանիմք տր և ած՝ կեցո՛ զմեզ։

Սարգաւագին։

Երևի տր այսօր աշակերտացն 'ի Թաբօրական լերինն. և աշակերտացն զարհուրեալ աղաղակէին ասելով, արասցուք երիս տաղաւարս. մի տն, և մի Մովսէսի, և մի Եղիայի։ Նոյն մեք բանաւոր հօտքս երգեմք ընդ քո Ճշմարիտ վկայիցդ. առաքեա՛ 'ի մեզ զլոյս քո շնորհացդ 'ի քոյ միւսանգամ գալստեանդ և կեցո՛։

Խաչէ։

Առաջի պատուական ամենայաղթ խաչի քո անկանիմք երկրպագելով և խնդրեմք զթողութի՛ յանցանաց մերոց. քանզի սովաւ բարձեր զդատապարտութի՛ ազգի մարդկան։ Նոյն այժմ վասն մեր ածային քոյ նշանի՝ շնորհեա՛ զերկնային զխաղաղութի՛դ ամենայն աշխարհի։

Որդւոյն որոտման։

Այսօր ահաւոր ձայնք որոտման հնչեցին յերկնից 'ի յերկիր կոչելով յորդեգրութիւն

զձեզ որդիք սիոնի. հաստատութիւն հաւատոյ, և պարծանք եկեղեցւոյ. որք ցօղով արեան ձերոյ՝ մաքրեցիք զտիեզերս յանօրէն կռապաշտութենէ: Արդ՝ հայցեցէք 'ի քէն զքաւութիւն տօնողացս անուան ձերոյ. մաղթանօք սոցա տ՟ր խնայեա՛ 'ի փրկեալ քո ժողովուրդս, որ միայնդ ես մարդասէր:

Հրեշտակաց:

Որ օրհնեն անլռելի ձայնիւ իմանալի զօրութիւնք, երկնաւոր նահապետութիւնք՝ հրեշտակք՝ և հրեշտակապետք, աթոռք՝ և տէրութիւնք, իշխանութիւնք՝ և պետութիւնք, սերովբէք՝ և քերովբէք զամենամեծ զերրորդութիւնն, և զմի ա՟ծութիւն:

Հրեշտակաց:

Այսօր երկրաւորս եկեղեցւոյ քահանայապետութիւն ցնծայ հրաշափառապէս՝ զերկնաւոր քահանայապետութեանցն կատարելով զտօնախմբութեն տօնս, անմարմնական դասուց հողեղինացդ՝ մարմնականքս և հողեղէնքս, ո՛վ ս՟ք գաբրիէլ և միքայէլ մեծք, հրեշտակապետք բարձրելոյն, որք կայք առաջի աթոռոյ ա՟ծութեան. անդադար բարեխօս լերուք վասն մեր առ տէր, վերաբերել զամենեսեան ընդ ձեզ յերկնից արքայութիւն, և միաձայն բարբառով երգել զփառս:

## Գրիգորի Լուսաւորչին ։

Գրիգոր սուրբ քահանայապետ՝ որ զհաւատս ուսուցեր, և զբանակս դիւացն հալածեցեր. մարդկան ուսուցեր քարոզել զերրորդութ՟ին. պսակեցար յարքայութեանն. արդ՝ բարեխօս լեր առ Տ՟ր վասն մեր ։

## Ներսէս Շնորհալւոյն ։

Որ 'ի վերայ քերովբէիցն հանգչիս. և 'ի զօրացն հրեղինաց օրհնաբանիս, իջեր 'ի բաբելոն և փրկեցեր զերիս մանկունս 'ի հրոյն բռնութենէ. որք աղաղակելով գոչէին երգ նոր, ամենայն գործք օրհնեցէք և բարձր արարէք ։ Խնդաւոր փառաց քո և արարիչ բոլորից. որ մարդասիրապէս գթացար 'ի Գ. մանկունս, փրկեցեր 'ի բորբոքեալ բոցոյն. որք անարգեցին զբռնութ՟ի թագաւորին, և շիջուցին զզօրութ՟ի հրոյն. ընդ նոսին և մեք քեզ վերագոչեմք, փրկեա զմեզ 'ի հրոյն յաւիտենից ։ Զի դու միայն ես բազմագութ տէր՝ քեզ փառք յաւիտեանս ամէն ։

9359-57



Մտադրութի՛ տէրն աղօթէ ․
զկերպ աղօթից մեզ աւանդէ ։

# ՕՐՀՆՔ ԱՐԿԱՆԵԼՈՅ

## ՍՊԱՍ ԵԿԵՂԵՑՒՈՅ

Յորժամ կամիցի քահանայն պատարագ մատուցանել,
պարտ է այսպէս խորհրդաբար պատրաստել։

Սոյն յառաջադրութիւն, հանդերձ արքեպիսկոպոսն, որ պատրաստ են պատարագի։ Եւ պատրաստեալ պաշտօնէիցն ընդ խորհրդանշիւր արտաքնէ. ասասցեն զայս սաղմոս. Ձ̃յն. Կցուրդ։

*Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. և սուրբք քո ցնծալով ցնծասցեն։*

Փոխ։

*Յիշեա Տէր զդաւիթ, և զամենայն հեզութիւն նորա։*

*Որպէս երդուաւ տ̃ն. և ուխտ եդ աստուծոյ յակոբայ։*

*Թէ ոչ մտից 'ի յարկս տան իմոյ. եթէ ելից յանկողինս մահճաց իմոց։*

*Թէ տաց քուն աչաց իմոց. կամ նինջ արտեւանաց իմոց, կամ հանգիստ իրանաց իմոց, մինչև գտից զտեղի յարկի տեառն ա̃յ յակոբայ։*

*Ահա լուաք զնմանէ յեփրաթայ. և գտաք զնա 'ի դաշտս մայրեաց։*

Մտցուք ՚ի յարկս նորա. երկիրպագցուք ՚ի
տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա :
Արի Տէր ՚ի հանգիստ քո՝ դու և տապանակ
կտակի սրբութեան քոյ :
Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. և սուրբք
քո ցնծալով ցնծասցեն :
Վասն Դաւթի ծառայի քոյ. մի դարձուցաներ
զերեսս քո յօծելոյ քումմէ :
Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ. և ոչ
ստեաց նմա. ՚ի պտղոյ որովայնի քոյ նստու-
ցից յաթոռ քո :
Եթէ պահեսցեն որդիք քո զուխտս իմ, և զվ-
կայութիւնս իմ զոր ուսուցից նոցա :
Որդիք նոցա նստցին յաւիտեանս յաւիտենից
յաթոռ քո :
Հաճեցաւ Տէր ընդ Սիոն. և ընտրեաց բնա-
կել ՚ի նմա. ասէ՝ այս է հանգիստ իմ յաւի-
տեանս յաւիտենից. ՚ի սմա բնակեցայց՝ զի
հաճեցայ ընդ սա :
Զայրիս սորա օրհնելով օրհնեցից, և զաղ-
քատս սորա լցուցից հացիւ :
Զքահանայս սորա զգեցուցից զփրկութիւն.
և սուրբք սորա ցնծալով ցնծասցեն :
Անդ ծագեցից զեղջիւր Դաւթի, պատրաստ
արարից զճրագ օծելոյ իմոյ :
Զթշնամիս նորա զգեցուցից զամօթ, այլ ՚ի
վերայ նորա ծաղկեսցի սրբութիւն իմ :
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյ :

Եւ քարոզէ սարկաւագն :
Եւ եւս խաղաղութեան զՏէր.
Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ ՚ի

տնէ, զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ 'ի վերայ մեր ։ Ամենակալ Տր ած մեր՝ կեցո և ողորմեա ։

Եւ ասասցեն երկոտասան
Տր ողորմեա ։

Եւ քահանայն ասասցէ զաղօթս ։

Որ զգեցեալ ես զլոյս որպէս զհանդերձ Տր մեր յիսուս քս. անճառելի խոնարհութեամբ 'ի յերկրի երևեցար, և ընդ մարդկան շրջեցար ։ Որ եղեր քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի, և զարդարեցեր զեկեղեցի քո սր ։ Տր ամենակալ որ պարգևեցեր մեզ զնոյն զերկնային հանդերձ զգենուլ, արժանի արա և զիս 'ի ժամուս յայսմիկ զանպիտան ծառայս քո, որ համարձակիմ և մերձենամ 'ի նոյն հոգևոր պաշտօն փառաց քոց ։ Որպէս զի զամենայն ամբարշտութիւնս մերկացայց, որք են հանդերձք պղծութեան, և զարդարեցայց լուսով քով ։ Ինկեա յինէն զչարիս իմ. և թօթափեա զյանցանս իմ, որպէս զի արժանի եղէց հանդերձելոյ լուսոյդ առ 'ի քէն ։ Շնորհեա ինձ քահանայական փառօք մտանել 'ի պաշտօն սըրբութեանց քոց ընդ այնոսիկ՝ որք անմեղութեամբ պահեցին զպատուիրանս քո ։ Զի և ես պատրաստ գտայց երկնաւոր առագաստին ընդ իմաստուն կուսանսն փառաւորել զքեզ քս որ բարձեր զմեղս ամենեցուն. զի դու ես սրբու-

թիւն անձանց մերոց ։ Եւ քեզ բարերարիդ ա͞յ վայել է փառք իշխանութի͞ւ և պատիւ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից .
Ամէն ։

Եւ մատուցեալ սարկաւագունքն զգեցուսցեն նմա
զհանդերձսն սաղմոսելով ։
Եւ դիցէ յառաջ զխոյրն ՚ի գլուխն, և ասասցէ ։

Դիր տէր սաղաւարտ փրկութեան ՚ի գլուխ իմ, պատերազմիլ ընդ զօրութիւն թշնամւոյն ։ Շնորհօք տեառն մերոյ յ͞ի ք͞ի, որում վայելէ փառք, իշխանութի͞ւ, և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից . Ամէն ։

Շապիկն ։

Զգեցո՛ ինձ տէր հանդերձ փրկութեան, և պատմուճան ուրախութեան, և շուրջ պատեա՛ զզգեստովս փրկութեան ։ Շնորհօք տ͞ն մերոյ յ͞ի ք͞ի ։

Գօտւոյն ։

Շուրջ պատեսցէ կամար հաւատոյ զմէջս սրտի իմոյ և մտացս, և շիջուսցէ ՚ի սոցանէ զխորհուրդս աղտեղիս ։ Եւ զօրութիւն շնորհաց քոց յամենայն ժամ բնակեսցէ ՚ի սոսա ։
Շնորհօք տեառն մերոյ յ͞ի ք͞ի ։

### Ռափայէլ ։

Տուր ո՛վ զօրութի՛ւն ձեռին իմոյ, և լուծ զամենայն աղտեղութի՛ւնս իմ, որպէս զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անախտութեամբ հոգւոյ և մարմնոյ ։ Շնորհօք տեառն մերոյ Յսի Քսի, որում։

### Ուրիէլ ։

Օգնեա՛ ո՛վ պարմանոցի իմոյ զարդարութի՛ւն, և սրբեա՛ զսիրտ իմ յամենայն աղտեղութե՛նէ մեղաց ։ Շնորհօք տն մերոյ Յսի Քսի ։

### Սաֆորաէլ, որ է Ըուրջաան ։

Տէ՛ր ողորմութեամբ քով զգեցո՛ ինձ զգեստ պայծառ, և պարսպեա՛ ընդդէմ ներգործութեան չարին, զի արժանի եղէց փառաւորել զքո փառաւորեալ անունդ ։ Շնորհօք տեառն մերոյ Յսի Քսի ։

### Յետ հրեշտակապետերուն պահապան հրեշտակին՝ ասէ ։

Ցնծասցէ անձն իմ ՚ի տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութե՛ն և պատմուճան ուրախութեան ։ Որպէս փեսայի եդ ինձ պսակ, և որպէս զհարսն զարդու զարդարեաց զիս ։ Շնորհօք տեառն մերոյ Յսի Քսի ։



Սրբուհի կոյս զշնորհ գործունեայ.
յա̃ծորդեայց վասն իմ հայցեա:

Եւ յետ զգենլոյ սրբազնեան զգեստուցն , եկեալն
առաջի սրբոյ սեղանոյն ։ Եւ քահանայն լուանայ
զձեռս ասելով ։ Սաղ․ ԻԵ ։

*Լուացից սրբութեամբ զձեռս իմ, և շուրջ եղեց զսեղանովք քո տ՟ր ։*

Սարկաւագն ։

*Դատ արա ինձ տ՟ր , զի ․ և այլն ։*
դասն առ դասն փոխն ՚ի ձայն ։

Քահանայն ։

ԵՒ ՎԱՍՆ ՍՐԲՈՒՀԻՈՅ
*Ա՟ծածնին տէր ընկալ զաղաչանս մեր․ և կեցո զմեզ ։*

Սարկաւագն ։

*ՍԻ զա՟ծածինն և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ՚ի յերկինս , զի կամեցեալ ողորմեսցի, և գթացեալ կեցուսցէ զարարածս իւր ։ Ամենակալ տէր Ա՟ծ մեր կեցո և ողորմեա ։*

Քահանայն ։

Ընկալ Տէր զաղաչանս մեր բարեխօսութեամբ սրբոյ Աստուածածնին անարատ ծնողի միածնի որդւոյ քո. և աղաչանօք ամենայն սրբոց քոց, (և որոց այսօր է յիշատակ). լուր մեզ Տէր և ողորմեա՛, ներեա՛, քաւեա՛, և թո՛ղ զմեղս մեր ։ Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ որդւոյ՝ և ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն ։

Եւ ապա խոնարհեալ պատարագիչ քահանայն առաջի այլոց քահանայիցն առընթեր կայեցոյն՝ ասէ ։

Խոստովանիմ առաջի Աստուծոյ, և սրբուհւոյ Աստուածածնին, և առաջի ամենայն սրբոց, և առաջի ձեր հարք և եղբարք, զամենայն մեղս զոր գործեալ եմ ։ Քանզի մեղայ խորհրդով՝ բանիւ, և գործով, և ամենայն մեղօք, զոր գործեն մարդիկ, մեղայ, մեղայ ։ Աղաչեմ զձեզ՝ խնդրեցէք վասն իմ յԱստուծոյ զթողութիւն ։

Պատասխանեն որք մերձն են ։

Ողորմեսցի քեզ Աստուած հզօրն, և թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, անցելոցն, և այժմուս, և յառաջիկայիցն փրկեսցէ զքեզ, և հաստատեսցէ յամենայն գործս բարիս, և հանգուսցէ զքեզ 'ի հանդերձեալ կեանս. Ամէն ։

Պատասխանեսցէ և ընդն ։

Զգաստեսցէ և զձեզ մարդասէրն ա͞ծ, և թողցէ զամենայն յանցանս ձեր ։ Տացէ ժամանակ ապաշխարելոյ և գործելոյ զբարիս ։ Ուղղեսցէ և զառաջիկայ կեանս ձեր շնորհօք ս͞ր հոգւոյն, հզօրն և ողորմածն, և նմա փառք յաւիտեանս. Ամէն ։

Դպիրն ։

Յիշեսջիր զմեզ առաջի անմահ գառին աստուծոյ ։

Քահանայն ։

Յիշեալ լիջիք առաջի անմահ գառին ա͞յ ։

Դպիրն ։ Սաղմոս . ղ͞թ . ձոխ ։

Աղաղակեցէք առ տէր ամենայն երկիր . և այլն ։

Սարկաւագն քարոզէ ։

Ամենեքեան աղաչեսցուք զտ͞ր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ՚ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ . ամենակալ տ͞ր ա͞ծ մեր կեցո և ողորմեա ։

Քահանայն ։

Ի մէջ տաճարիս և առաջի ա͞ծընկալ և պայծառացեալ ս͞ր նշանացս և սուրբ տեղւոյս,

խոնարհեալ երկիւղիւ երկրպագանեմք , ըզ-
սուրբ զհրաշալի և զյաղթող զտէրութիւնդ
քո փառաւորեմք : Եւ քեզ մատուցանեմք
զօրհնութ՟ի և զփառս ընդ հօր և ընդ հոգ-
ւոյդ սրբոյ . այժմ և միշտ , և յաւիտեանս
յաւիտենից . Ամէն :

Ի՛ ճաշանայն . սաղ . խ՟է . կցուրդ :

Մտից առաջի սեղանոյ :

Սարկաւագն :

Դա՛տ արա ինձ ա՟ծ . և այլն .
տուն առ տուն փոխելն ՚ի լման :

Սարկաւագն քարոզէ :

Եւ ևս խաղաղութե՟ զ՟տր :
Օրհնեցո՛ւք զհայր տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի , որ ար-
ժանի արար զմեզ կալ ՚ի տեղւոջ փառաբա-
նութեան , և երգել զերգս հոգևորս , ամենա-
կալ տ՟ր ա՟ծ մեր կեցո՛ և ողորմեա :

Ի՛ ճաշանայն :

Ի յարկի սրբութե՟ , և ՚ի տեղւոջ փառաբա-
նութե՟ , հրեշտակաց բնակարանիս , և մարդ-
կան քաւարանիս . առաջի ա՟ծ ընկալ և պայծա-
ռացեալ սուրբ նշանացս և սուրբ սեղանոյս
խոնարհեալ երկիւղիւ երկրպագանեմք , ըզ-
սուրբ զհրաշալի և զյաղթող զյարութիւնդ քո
փառաւորեմք : Եւ քեզ մատուցանեմք զօրհ-
նութիւն և զփառս ընդ հօր և ընդ հոգւոյդ

որդւոյ. այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Իսկ եթէ եպիսկոպոս լիցի խորհրդածուն, տացէ զմէ ձեռնչեան, և ածցէ 'ի վերայ ընծային և զպատարագական եմիփորոնն, և եկեսցեն առընթեր ընծայարան սեղանոյն, ընթացեալ զհետ այս: Եւ մատուցեալ առաջի սեղանոյն, ընդ և անձամբն ասասցէ զաղօթս առ Տէր հոգին սրբոյ ընթէն գործոյն:

Ամենակալ բարերար մարդասէր Ած բոլորից, յորինող երևութից և աներևութից, փրկող և հաստատող, խնամող և խաղաղարար հօր հզօր Հոգի. Հայցեմք բազկատարած մաղթանաց գոչմամբ հեծութեան՝ յանդիման եղեալ քեզ ահաւորիդ: Ատչիմք մեծաւ դողութեամբ, սաստիկ երկիւղիւ, մատուցանել նախ զբանական զայս պատարագ՝ քում անզննելի զօրութեանդ, իբր աթոռակցի փառակցի և արարչակցի՝ Հայրենի անկապուտ պատուոյդ, և քննողի ծածկութեան խորոց խորհրդոց ամենակատար կամաց հօրդ Եմմանուէլի՝ զքեզ առաքչի, փրկչի և կենդանատուի, և արարչի ամենայնի: 'Ի ձեռն քոյ ծանուցաւ մեզ երրեակ անձնաւորութիւն միաւորական Ածութեան. յորոց մի և դու ճանաչիս անհաս: Որ և, և 'ի ձեռն քո առաջինքն նահապետական տոհմին շառաւիղք՝ տեսանողք անուանակոչեալք, զան-

ցեալըն և զգալոցն անստուերաբար բարբառոյ բանի վերապատմեցին․ Հոգի ո՜յ քաղզեալ զքեզ մովսէսի, որ ՚ի գնալն քո ՚ի վերայ ջրոցն անպարագիր զօրութիւն, աՀեղ շրջակութեամբ տածողականաւ, թևապարփակ պաշտպանողօրէն զթափրեալ ՚ի ծնունդս նորոգս՝ զաւազանին խորհուրդ ծանուցեր։ Յոր կերպարան օրինակութե՛ նախ քան զկառուցանել զլոյծդ մածուած վերջնում վարագուրիդ, յօրինեցեր կարող տիրապէս զբովանդակ բնութիս ամենից բնաւից բոլորից գոյից ամենայն էից՝ յանէից։ Ո՛վ ստեղծանին ՚ի նորոգութիւն յարութեան ամենայն եղեալքս առ ՚ի քէն, յայնմ ժամանակի, որ է օր վերջին այսմ կենցաղի, և օր առաջին՝ երկրին կենդանեաց։ Ո՛եղ Հնազանդեցաւ միութ̃ կամացն որպէս Հօրն խորում, ազգակիցն քո՝ էակիցն Հօր՝ անդրանիկն որդի՝ մերոյս կերպիւ զքեզ աւետարանեաց Ճշմարիտ ա̃ծ՝ Հաւասար և Համագոյ Հօր իւր Հզօրի․ և զառ ՚ի քեզ Հայհոյութի̃ն անքաւելի քարոզեաց․ և իբր զա̃ծամարտիցն զքո Հեստելոցն՝ չարաբանական բերանս կարկեաց․ և զիւրն շնորհեաց՝ արդարն և անարատն՝ գտիչն ամենայնի․ որ վասն մեղաց մերոց մատնեցաւ․ և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ։ Նմա փառք ՚ի ձեռն քո, և քեզ բարեբանութիւն ընդ Հօր ամենակալի, յաւիտենից յաւիտեանս․ Ամէն։

Պարծեալ հրճուեսցի 'ի նոյն հարկ բանի, մինչև հաստա-
տութեանն ըստ այս հրաշալեաց յայտնեացի ազդեալ աւե-
տարանել վերստին շնորհին խաղաղութեան։

Աղաչեմք և աղերսեմք արտասուալից հառաչմամբ յամ անձնէ՝ զփառաւորեալ արարչութիւնդ՝ անեղծ և անստեղծ՝ անժամանակ հոգւոյդ գթածի. որ բարեխօսդ ես վ՜ն մեր յանմռունչ հեծութիւ՛ առ ողորմածդ հայր. որ զմ՜ս պահես, և զմեղուցեալս մաքրես՝ և տաճարս կազմես կենդանի և կեցուցիչ կամաց բարձրելոյդ հօր։ Արդ՝ ազատեա՛ զմեզ յամ անմաքուր գործոց, որ ոչ է հաճոյ քումդ բնակութեան. և մի՛ շիջցի՛ս առ 'ի մէնջ լուսոյդ շնորհաց փայլմունք՝ 'ի տեսականացս աչաց իմաստից. վասն զի զքեզ ուսաք միանալ 'ի մեզ 'ի ձեռն աղօթից, և ընտիր վարուց խնկելոց։ Եւ քանզի մինդ յերրորդութենէդ պատարագի, և միւսդ ընդունի՝ հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ. իսկ դու ընկալցիս զմեր պաղատանս, և յարդարեսցես զմեզ օթեվանս պատուականս ամենայն պատրաստութեամբ 'ի վայելումն ճաշակման երկնաւոր գառինդ, առանց պատժոց դատապարտութեան ընդունել զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեանն։ Եւ հալեսցի 'ի հրոյս յայմանէ գայթակղութիւնս մեր, որպէս մարգարէին կենդանախարոյկ կայծակամբն, 'ի ձեռն

ունելեացն մատուցման. զի ամենայնի քոյդ-քարոզեսցի գթութիւն, որպէս որդւոյդ այ՝ Հօր քաղցրութի. որ զանառակ որդին մերձե-ցոյց 'ի հայրենի ժառանգութիւնն, և զպոռ-նիկսն յառաջեցոյց յերկնային արքայութիւն՝ արդարոցն երանութեան: Այո՛ այո՛՝ և ես մի եմ 'ի նոցանէ, և զիս ընկալ ընդ նոսին, իբր մարդասիրութեան կարօտեալ մեծի, շնորհօք քո ապրեալ, զարեամբ քով ստացեալս: Զի յայսմ ամենայնի՝ յամենայնի ծանիցի քո մեծ-ութիւնդ, ընդ Հօր փառաւորեալ համապատ-ւաբար 'ի մի կամս, և 'ի մի իշխանութիւն զօրութեան:

Դ ձայն:

Զի քո է գթութիւն, և կարողութիւն, և մարդասիրութիւն, զօրութիւն, և փառք յա-ւիտեանս յաւիտենից. Ամէն:

Ապա յարուցեալ երէցն առ ընծայարան սեղանոյն, առ որ մատուցեալ նախասարկաւագն նշխարն, զոր տուեալ քահանային դնէ 'ի մաղզման, ասելով:

Յիշատակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-տոսի:

Եւ առեալ զգինին արկանէ խաչանիշ 'ի սկիհն: Կրկնեալ և առանձին ի ջուր արկանէ, ասելով:

Յաղագս յիշատակի փրկագործ տնօրէնութե-ան այ, և փրկչին մերոյ յի քի:

Նա ասասցէ զաղօթս 'ի ծածուկ յօրհնութիւն նուիրաբե-
րանին :

Տ՟ր ա՟ծ մեր, որ զերկնաւոր հացդ, զՏ՟ր մեր Յ՟ս Ք՟ս զկերակուրդ ամենայն աշխարհի առաքեցեր փրկիչ և կեցուցիչ և բարերար, օրհնել և սրբել զմեզ: Նոյնին դու Տ՟ր օրհ✠նեա և այժմ զառաջադրութիւնս զայս: Ընկալ զսա յերկնային քո սեղանդ: Յիշեա՛ որպէս բարերար և մարդասէր զմատուցօղս, և վասն որոց մատուցանի: Եւ զմեզ անդատապարտ պահեա՛ 'ի քահանայագործութի Ա՟ծային խորհրդոց քոց: Զի սուրբ և փառաւոր է ամենապատիւ մեծվայելչութիւն փառացդ Հօր, և Որդւոյ, և Հոգւոյդ Ս՟բ. այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Նա սաղմոսեսցէ ասելով:

Տէր թագաւորեաց, զվայելչութիւն. և այլն:

Նա արկցէ խունկ ասելով:

Խունկ մատուցանեմ առաջի քո Ք՟ս ա՟ծ բուրումն հոգևորական: Ընկալ 'ի ս՟բ յերկնային, և յիմանալի քո մատուցարանդ 'ի հոտ անուշից: Առաքեա առ մեզ փոխարէն զշնորհս, և զպարգևս Հոգւոյդ Սրբոյ: Եւ քեզ մատուցանեմք զփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյդ Ս՟բ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Դա երեքս երկրպագեալ քահանայն, համբուրեսցէ զսեղանն:
Եւ սարկաւագն կացեալ ՚ի մէջ տաճարին, ձայնեսցէ ասելով:

Օրհնեա տէր:

Եւ քահանայն ՚ի ձայն ասասցէ:

Օրհնեալ թագաւորութիւնն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Եւ սկսցեն այլ եկեղեցականքն ժամամուտ ըստ պատշաճի աւուրն:

Եւ յաւարտման երգոյն քարոզէ սարկաւագն:

Եւ ևս խաղաղութեան զՏէր:

Ժողովուրդն: Տէր ողորմեա:
Սարկաւագն: Կեցո և ողորմեա:
Ժողովուրդն: Կեցո տէր:
Սարկաւագն: Օրհնեա տէր:

Ի ՏՕՆԱԿԱՆ ԱՒՈՒՐՍ ՂԱԶԱՐՈՒ :

Տ̃Ր ա̃ծ մեր, որոյ կարողութիւնդ անքըն-նին է, և փառքդ անհասանելի, որոյ ողորմութիւնդ անչափ է, և գթութիւնդ ան-բաւ : Դու ըստ առատ մարդասիրութեան քում, նայեաց 'ի ժողովուրդս քո, և 'ի տա-ճարս յայս սր̃ : Արա ընդ մեզ, և ընդ աղօթակիցս մեր առատապէս զողորմութիւն քո, և զգթութիւն : Զի քեզ վայելէ փառք իշխանութիւն, և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Ի ՏՕՆԱԿԱՆ ԱՒՈՒՐՍ ԽՈՐՀՐԴԱԲԱՐ :

Տ̃Ր ա̃ծ մեր, կեցո զժողովուրդս քո և օրհ-նեա զժառանգութիւնս քո, զլրումն եկեղեց-ւոյ քո պահեա, սրբեա զսոսա, որք ողջունե-ցին սիրով զվայելչութի̃ տան քոյ : Դու զմեզ փառաւորեա ա̃ծային զօրութեամբ քով . և մի թողուր զյուսացեալքս 'ի քեզ : Զի քո է կարողութի̃, և զօրութիւն, և փառք, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

ԽԱՂԱՂՈՒԹԻ̃Ն ✠ ԱՄԵՆԵՑՈՒՆ :

Որ հասարակաց զայս, և միաձայն մեզ ամե-նեցուն ուսուցեր աղօթել, և զերկուց և զե-րից միաբանելոց յանուն քո զխնդրուածս պար-գևել խոստացար : Դու և այժմ զծառայից

քոյ խնդրուածս՝ առ 'ի յօգուտն կատարեա՛ , շնորհելով յայսմ յաւիտենիս զգիտութիւն քում ճշմարտութեան , և 'ի հանդերձեալն զկեանսն յաւիտենականսն պարգևելով ։ Զի բարերար և մարդասէր ես ած . և քեզ վայելէ փառք , իշխանութիւն և պատիւ , այժմ և միշտ , և յաւիտեանս յաւիտենից . Ամէն ։

Եւ ապա սարկաւագն շուրջառն ըստ պատշաճի առեալ ։ Եւ 'ի միջի տանն երթիցեն առաջի բեմին , և երկրպագեսցեն երիցս ։

Եւ քահանայն ասասցէ զաղօթս ։

Տէր ած մեր , որ կարգեցեր յերկինս զդասս, և զզինուորութիւնս հրեշտակաց և հրեշտակապետաց 'ի սպասաւորութիւն փառաց քոց ։ Արա՛ այժմ ընդ մուտս մեր մտանել և սրբոց հրեշտակաց, և լինել պաշտօնակից մեզ և փառաբանակից քում բարերարութեան ։

'Ի ձայն ։

Զի քո է կարողութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս . Ամէն ։

Եւ համբուրեսցեն զսեղանն , և յաւարտման շուրջանին՝ գոչեսցէ սարկաւագն .

Պռօսխումէ ։

Ապա ասասցեն զերեքսրբեանն ձայնիւ ։

Ս՟բ Ա՟ծ, ս՟բ և Հզօր, ս՟բ և անմահ, ողորմեա մեզ ։

Ապա քահանայն զայս սքին ասասցէ 'ի ծածուկ աղօթս ։

Ա՟ծ ս՟բ, որ 'ի ս՟բս հանգուցեալ ես, և երեքսրբեան ձայնիւ սերոբէք գովեն զքեզ, և քերոբէք փառաբանեն, և ամենայն երկնային զօրութիւնքն քեզ երկրպագանեն ։ Որ 'ի չգոյէ 'ի գոյ ածեր զամենայն արարածս ։ Որ արարեր զմարդն ըստ պատկերի քում, և նմանութեան, և ամենայն շնորհիւ քով զնա զարդարեցեր, և ուսուցեր խնդրել զիմաստութիւն և զգգօնութիւն. և ոչ անտես արարեր զմեղուցեալն, այլ եդեր 'ի վերայ նորա զապաշխարութիւն փրկութեան ։ Որ արժանի արարեր զմեզ զնուաստացեալ և զանարժան ծառայքս քո 'ի ժամուս յայսմիկ կալ առաջի փառաց սրբութեան սեղանոյ քոյ, և զօրինաւոր երկրպագութիւն և զփառաբանութիւն մատուցանել քեզ ։ Դու տէր ընկալ 'ի բերանոյ մեղաւորացս զերեքսրբեան օրհնութիւնս, և պահեա զմեզ քոյին քաղցրութեամբ ։ Թող մեզ զամենայն յանցանս մեր զկամայ և զակամայ ։ Սրբեա զհոգի զմիտս և զմարմինս մեր. և շնորհեա 'ի սրբութեան պաշտել զքեզ զամենայն աւուրս կենաց մերոց. բարեխօսութեամբ սրբուհւոյ Ա՟ծածնին, և ամենայն սրբոց քոց,

որք յաւիտենից քեզ բարեհաճոյացան ։ Զի դու ես Տէր Աստուած մեր, և քեզ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն ։

Եւ սարկաւագն քարոզեսցէ ։

Եւ ես խաղաղութեն զտէր ։
Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի ։

Սարկաւագն ձայնեսցէ ։

Օրհնեա տէր ։

Եւ քահանայն երկրպագեալ ասասցէ 'ի ծածուկ աղօթս ։

Տէր Աստուած մեր, զհաստատարած զաղաչանս ծառայից քոց վերընկալցիս, և ողորմեսցիս ըստ մեծի ողորմութեան քում ։ Զգթութիւն քո առաքեա 'ի վերայ մեր և ամենայն ժողովրդեանս, որք ակն ունին առ 'ի քէն առատ ողորմութեանդ ։

Քն ձայն ։

Զի ողորմած և մարդասէր ես Աստուած գոլով. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն ։

Եւ ժամանակին նստցէ յաստիճանն : Եւ սկսցին սաղ-մոս : Սուրբ , ըստ խորհրդոյ աւուրն : Եւ ընթերցցին զգիրս մարգարէականս , և առաքելականս : Եւ ասեն ալէլու ըստ ցուցանելոյ ընթերցուածոյն : Եւ յաւարտ-մանն՝ սարկաւագն բարձր ձայնիւ գոչեսցէ :

Օրթի :

Քահանայն դարձցի 'ի ժողովուրդն , և խաչակնքեսցէ 'ի վերայ ժողովրդեանն . և ասասցէ :

Խաղաղութիւն ✠ ընդ ամենեսեան :

Ժողովուրդն : Եւ ընդ հոգւոյդ քում :
Սարկաւագն : Երկիւղածութեք լուսաւորուք :

Սարկաւագն :

Սրբոյ աւետարանիս ըստ Մատթէոսի :

Ժողովուրդն : Փառք քեզ Տ̃ր ա̃ծ մեր :
Սարկաւագն : Պռօսխումէ :
Ժողովուրդն : Ասէ օթէօս :

Եւ սարկաւագն ընթերցցէ զաւետարանն . և յաւարտն ասասցեն ամենեքեան :

Փառք քեզ Տ̃ր ա̃ծ մեր :

Հաւատամք'ի մի Ած Հայրն ամենակալ. յարարիչն երկնի և երկրի՝ երևելեաց և աներևութից ։ Եւ 'ի մի Տր Յս Քս, յորդին Այ, ծնեալն յԱյ Հօրէ՝ միածին նախ քան զամենայն յաւիտեանս ։ Ած յԱյ, լոյս 'ի լուսոյ, Ած Ճշմարիտ, յԱյ Ճշմարտէ ծնունդ՝ և ոչ արարած ։ Նոյն ինքն համագոյակից Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և 'ի վերայ երկրի՝ երևելիք և աներևոյթք ։ Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան՝ իջեալ 'ի յերկնից, մարմնացաւ՝ մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ հոգւով սրբով ։ Որով էառ մարմին, հոգի, միտք, և զամենայն որ ինչ է 'ի մարդ. Ճշմարտապէս և ոչ կարծեօք ։ Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ 'ի յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ Հօր ։ Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր՝ դատել զկենդանիս և զմեռեալս ։ Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան ։ Հաւատամք և 'ի սուրբ Հոգին՝ յանեղն և 'ի կատարեալն, որ 'ի Հօրէ և յորդւոյ բղխի ։ Որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս ։ Որ էջն 'ի Յորդանան, քարոզեաց զառաքեալսն, և բնակեցաւ 'ի սուրբս ։ Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի ։ 'Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն՝ 'ի

քաւութիւն՝ և 'ի թողութիւն մեղաց ։ 'Ի յարութիւն մեռելոց ։ 'Ի դատաստանն յաւիտենից, հոգւոց, և մարմնոց ։ Յարքայութիւնն երկնից՝ և 'ի կեանսն յաւիտենականս ։

Իսկ որք ասեն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր որդի, կամ էր երբեմն, յորժամ ոչ էր սբ̃ հոգին ։ Կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զորդին ա̃յ, և կամ զսբ̃ հոգին ։ Եւ թէ փոփոխելի են, կամ այլայլելի, զայնպիսին նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի ։

Լուսաւորչէն ։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկիրպագանելով սբ̃յ Երրորդութե̃ն, և մի ա̃ծութեանն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։

Ժողովուրդն ։ Ամէն ։

Եւ սարկաւագն քարոզեսցէ 'ի ժողն ։

Եւ ևս խաղաղութե̃ զ̃տր ։
Ժղվ̃դն ։ Տէր ողորմեա ։
Սրկ̃գն ։ Եւ ևս հաւատով ։

Մինչ նոքա երգեն, քահանայն աղօթս առնէ 'ի ծածուկ ։

ՏԷՐ մեր և փրկիչ յս̃ քս̃, որ մեծդ ես ողորմութեամբ, և առատ պարգևօք բարերարու-

թեան քո։ Որ դու քոյին կամաւ 'ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց, խաչի, և մահու՝ յաղագս մեղաց մերոց. և պարգևեցեր առատապէս զպարգևս հոգւոյդ սրբոյ երանելի առաքելոցն։ Հաղորդս արա և զմեզ տ̅ր, աղաչեմք զքեզ՝ ա̅ծային պարգևացդ, թողութեան մեղաց, և ընդունելութե̅ հոգւոյդ սրբոյ։

'Ի ձայն։

Որպէս զի արժանաւորք եղիցուք գոհութե̅ փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Խաղաղութի̅ ✠ ամենեցուն։

Խաղաղութեամբ քով ք̅ս փրկիչ մեր, որ 'ի վեր ես քան զամենայն միտս և զբանս՝ ամրացո՛ զմեզ, և աներկիւղ պահեա յամենայն չարէ։ Հաւասարեա զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո, որք հոգւով և ճշմարտութե̅ քեզ երկրպագանեն։ Զի ամենասուրբ երրորդութեանդ վայելէ՝ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Օրհնեալ տ̅ր մեր յ̅ս ք̅ս։

Ժողովուրդն։ Ամէն։
Սարկաւագն։ Օրհնեա՛ տ̅ր։

Բռնանոյն :

Տէր ա̅ծ օրհնեսցէ ✠ զամենեսեանդ :

Սարկաւագն : Սաղմոս ասացէք :

Սրբասացութեան ըստ խորհրդեան աւուրն :
Յետ որոյ սարկաւագն յայնեսցէ :

Մի՛ ոք յերեխայից , մի՛ ոք :

Դպիրքն եղանակեսցեն :

Մարմին տէրունական , և ար" :

Եւ ապա եղանակեսցեն :

Որք ըստ քրովբէիցն :

Եւ 'ի սարկաւագացն վերաբերելոյ սրբազան հացն , և օրհնութե̄ բաժակին 'ի մէ̄ սեղանն :

Եւ մինչ նոքա երգիցեն , քահանայն խոնարհեսցէ առաջի սրբոյ սեղանոյն , և խորհրդաբար աղօթեսցէ 'ի ծածուկ :

Ոչ ոք արժանի է յըմբռնելոցս մարմնաւոր ախտիւք և ցանկութե̄ մատչել 'ի սեղան քո , կամ սպասաւորել արքունական փառաց քոց . քանզի պաշտել զքեզ՝ մեծ և ահաւոր երկնաւոր զօրութեանցդ իսկ է : Սակայն վասն անչափ բարերարութե̄ քոյ՝ անպարագրելի բանդ

հօր եղեր մարդ, և քահանայապետ մեր երևե-
ցար։ Եւ իբր տ͞ր ամենեցուն այսմ սպասաւո-
րութեան և անարիւն զենման զքահանայու-
թիւն աւանդեցեր մեզ։ Վասն զի դու ես տ͞ր
ա͞ծ մեր, որ տիրես երկնաւորաց և երկրաւո-
րաց։ Որ ՚ի վերայ քերովբէական աթոռոյ
բազմիս՝ սերովբէից տ͞ր, և թագաւոր իսրայէ-
լի։ Որ միայն ս͞բ ես, և ՚ի ս͞բս հանգուցեալ։
Աղաչեմ զքեզ միայն բարերար, նայեա՛ յիս ՚ի
մեղուցեալ և յանպիտան ծառայս քո, և սըր-
բեա՛ զհոգի և զմիտս իմ յամենայն պղծութէ-
չարին։ Եւ բաւականացո՛ զիս զօրութեամբ
ս͞բ հոգւոյդ, որ զգեցեալ եմ զքահանայա-
կանս շնորհ, կալ առաջի սրբոյ սեղանոյս, և
քահանայագործել զքո անարատ մարմինդ,
և զպատուական արիւնդ։ Քեզ խոնարհե-
ցուցեալ զպարանոցս իմ մաղթեմ, մի՛ դարձու-
ցաներ զերեսս քո յինէն, և մի՛ մերժեր զիս ՚ի
ծառայից քոց։ Այլ արժանի արա մատուցա-
նել քեզ զընծայս զայս յինէն ՚ի մեղուցեալ և
յանարժան ծառայէս քումմէ։ Զի դու
ես՝ որ մատուցանես, և մատչիս, և՛ ընդունիս,
և տաս ք͞ս ա͞ծ մեր։ Եւ քեզ փառս մատու-
ցանեմք հանդերձ անսկզբն հարբդ, և ամե-
նասուրբ և բարերար հոգւովդ, այժմ և միշտ,
և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Եւ ընծայսն վերաբերեալն ՚ի սեղանն դնէ. և քահա-
նայն խնկարկեալէ ՚ի վերայ սեղանոյն. և ըստ առաջնոյ
երիցս ասելով։

Լուացից սրբութ͞բ զձեռս։

Եւ քարոզեսցէ սարկաւագն ։

Եւ եւս խաղաղութեան զՏէր ։

Ժողովուրդն ։ Տէր ողորմեա ։
Սարկաւագն ։ Եւ եւս հաւա ։

Քահանայն՝ թէ սարկաւագ կայցէ 'ի խորհրդեանն, մինչ նա քարոզն ասիցէ, համբուրեսցէ զսեղանն, և խաչակնքեալ ✠ զժողովուրդն, ձեռնտարած կայցէ առաջի սեղանոյն . և ասասցէ 'ի ծածուկ զաղօթս ։

Տէր Աստուած զօրութեանց, և արարիչ ամենայն լինելութեանց, որ յանէութենէ զմեզ 'ի ցուցակութիւն ածեալ գոյացուցեր ։ Որ և զմեր հողեղէն բնութիւն՝ այսպիսի ահաւոր, և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս ։ Դու Տէր՝ որում պատարագեմք զպատարագս, ընկալ առ 'ի մէնջ զառաջադրութիւնս զայս ։ Եւ աւարտեա զսա 'ի խորհրդականութիւն մարմնոյ և արեան միածնի քո ։ Դեղ թողութեան մեղաց պարգևեա ճաշակողացս զհացս զայս և զբաժակս ։

'Ի ձայն ։

Շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում քեզ Հօր՝ միանգամայն և Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

Խաղաղութիւն ✠ ամենեցուն։

Ժողովուրդն։ Ամէն։ Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն։ Ողջոյն տուք միմեանց։

Եւ համբուրեսցեն զսեղանն, և զմիմեանս։

Ձայնեսցէ սարկաւագն։

Ահիւ կացցուք, երկիւղիւ։

Դպիրքն։ Առ քեզ ա̃ծ։
Սարկաւագն։ Պատարագ ք̃ս մատչի։
Դպիրքն։ Ողորմութ̃ի և խա։

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ ✠ ՚ի վերայ ժողովրդեանն, և ասասցէ։

Շնորհք, սէր, և ա̃ծային սրբարար զօրութ̃ին հօ̃ր և որդւոյ և հոգւոյն սրբոյ եղիցի ընդ ձեզ՝ ընդ ամենեսեան։

Ժողովուրդն։ Եւ ընդ հոգւոյդ։
Սարկաւագն։ ՚Ի վեր ընծայեցուցէք։
Դպիրքն։ Ունիմք առ քեզ տ̃ր։
Սարկաւագն։ Եւ գոհացարուք։
Դպիրքն։ Արժան և իրաւ։

Արժան է ստուգապէս և իրաւ ամենայօրգոր փութով միշտ երկիրպագանելով փառաւորել զքեզ Հայր ամենակալ: Որ քոյին անքննելի և արարչակից բանիւդ զանխծիցն բարձեր զկրձիմն: Որ ժողովուրդ ինքեան առեալ զեկեղեցի սեպհականեաց զհաւատացեալս ՚ի քեզ: Եւ զննելի բնութթ ըստ ՚ի կուսէն տրնտեսութեն հաճեցաւ բնակիլ ՚ի մեզ: Եւ նորագործ ա̃ծապէս ճարտարապետեալ զերկիրս երկին արար: Քանզի որում ոչն հանդուրժելին առաջի կալ զուարթնոցն ջոկք՝ զարհուրեալք ՚ի փայլակնացայտ, և յանմատոյց լուսոյ ա̃ծութեդ, եղեալ այդպիսիդ մարդ յաղագս մերոյ փրկութեան, շնորհեաց մեզ ընդ երկնայինսն պարել զհոգեղէն պարս:

՚Ի ձայն:

Եւ ընդ սերովբէս, և ընդ քերովբէս միաձայն սրբաասացութթ յօրինել նուագս, և համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին, և ասել:

Ս̃ր ս̃ր ս̃ր զօրութեանց, լի են երկինք և երկիր:



Ո՜Հ թէ որքան էր սաստկագին կսկիծ կուսին .
Մինչ տեսանէր զիւր միածինն ի մէջ խաչին :

Ոհանայն բաղձատարած աղօթեայց 'ի ծածուկ, մինչ Նոցա երգեցեն ։

Սուրբ սուրբ սուրբ ես Ճշմարտապէս և ամենասուրբ, և ով որ պանծասցի բովանդակել բանիւ զքո 'ի մեզ զանբաւ բարեգործութեանց զեղմունս ։ Որ և անդէն իսկ 'ի նախնումն զանկեալն ընդ մեղօք՝ զանազան եղանակօք խնամեալ սփոփեցեր՝ մարգարէիւք՝ օրինացն տուչութբ՝ քահանայութեամբ՝ և սուրբերակերպ երինջոցն մատուցմամբ ։ Իսկ 'ի վախճան աւուրցս այսոցիկ զբովանդակ իսկ զպարտեաց մերոց խզեալ զդատակնիքս, ետուր մեզ զորդիդ քո միածին՝ պարտապան և պարտս, զենումն և օծեալ, զառն և երկնաւոր հաց, քահանայապետ և պատարագ ։ Վասնզի ինքդ է բաշխօղ. և նոյն ինքդ բաշխի 'ի միջի մերում միշտ անծախապէս ։ Վասնզի եղեալ հաւաստեաւ և առանց ցնորից մարդ, և անշփոթ միաւորութբ մարմնացեալ յածածին և 'ի սբ կուսէն մարիամայ ։ Համապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց. և յաշխարհակեցոյց և յառիթն փրկութն մերոյ եկեալ կամաւ 'ի խաչն ։

Առեալ զհացն 'ի սբ՝ յածայինն՝ յանարատ և 'ի պատուական ձեռս իւր .

Օրհնեաց, գոհացաւ, եբեկ՝ ետ իւրոց ընտրեալ սուրբ եւ բազմեալ աշակերտացն՝ ասելով.

Առէք կերէք.

այս է մարմին իմ.

Որ վասն ձեր եւ բազմաց բաշխի ՚ի քաւութիւն եւ ՚ի թողութիւն մեղաց։

Նոյնպէս եւ զբաժակն առեալ.
Օրհնեաց, գոհացաւ, եարբ՝ ետ իւրոց ընտրեալ սուրբ եւ բազմեալ աշակերտացն՝ ասելով.

Արբէք ՚ի սմանէ ամենեքեան.

այս է արիւն իմ, նորոյ ուխտի, որ յաղագս ձեր, եւ բազմաց հեղանի ՚ի քաւութիւն եւ ՚ի թողութիւն մեղաց։

Եւ զոյն միշտ իւր յիշատակ առնել պատուիրան աւանդեաց մեզ բարերար որդիդ քո միածին։ Եւ իջեալ ՚ի ստորին վայրս մահու՝ մարմնովն՝ զոր ՚ի մերմէս ընկալաւ յաղդակցութէ։ Եւ զնիգս դժոխոցն աղարտեալ հզօրեղապէս, զքեզ միայն ծանոյց մեզ ճշմարիտ ա͞ծ, զա͞ծդ կենդանեաց եւ մեռելոց։

Նա առեալ զընծայս 'ի ձեռս ասասցէ 'ի գաւ :

Եւ արդ՝ մեք Տ̃ր ըստ այսմ հրամանատրութեան՝ յառաջերբեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ և արեան միածնի քոյ : Յիշեմք զդորա՝ որ վասն մեր զփրկագործ չարչարանսն, զկենդանատու խաչելութիւնն, զերեքօրեայ զթաղումն, զերանելի յարութիւնն, զա̃ծապէս համբարձումն, զնստելն ընդ աջմէ քո Հայր, զահաւոր և զփառաւորեալ զմիւսանգամ գալուստն խոստովանիմք և օրհնեմք :

Նա դիցէ զընծայսն 'ի վերայ սեղանոյն, և ասասցէ 'ի ձայն :

Եւ զքոյս 'ի քոյոցս քեզ մատուցանեմք, ըստ ամենայնի, և յաղագս ամենեցուն :

Դպիրքն : Յամենայնի օրհնեալ ես :

Մինչ նոքա երգիցեն՝ քահանայն բազկատարած աղօթեսցէ 'ի ծածուկ :

Զքեզ արդարև Տ̃ր Ա̃ծ մեր գովեմք, և ըզքեզն գոհանամք հանապազ : Որ զանց արարեր զմերով անարժանութեամբս, այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս : Ոչ յաղագս մերոյ ինչ բարեգործութեան՝ յորոց յոյժ Թափուր եմք, և միշտ ունայն գտանիմք հանապազ : Այլ 'ի քո բազմագեղ ներողութիւնդ ցանկ ապաւինեալ՝ համարձակիմք մերձենալ 'ի սպասաւորութիւն

մարմնոյ և արեան միածնի քո տ՟ն մերոյ և փրկչիդ յ՟ի ք՟ի։ Որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Խաղաղութիւն ✠ ամենեցուն։

Սրկ՟ն։ Ա՟ծ երկիրպագես։
Ժող՟ն։ Առաջի քոյ տ՟ր։

Քահանայն խոնարհեցուցէ և ասասցէ։

Երկիրպագանեմք և աղաչեմք, և խնդրեմք 'ի քէն բարերար տ՟ծ՝ առաքեա 'ի մեզ, և յառաջի եդեալ յընծայս յայս զմշտնջենաւորակից քո, և զէակից ս՟բ հոգիդ։

Եւ կանգնեալ խաչակնքեսցէ զընծայսն՝ ասելով 'ի ցած։

Որով զհաց օրհ✠նեալ մարմին ճշմարտապէս
արարեր տ՟ն մերոյ և փրկչին յ՟ի ք՟ի։
Որով զհաց օրհ✠նեալ մարմին ճշմարտապէս
արարեր տ՟ն մերոյ և փրկչին յ՟ի ք՟ի։
Որով զհաց օրհ✠նեալ մարմին ճշմարտապէս
արարեր տ՟ն մերոյ և փրկչին յ՟ի ք՟ի։
Եւ զբաժակ օրհ✠նեալ արիւն ստուգապէս
արարեր տ՟ն մերոյ և փրկչին յ՟ի ք՟ի։
Եւ զբաժակ օրհ✠նեալ արիւն ստուգապէս
արարեր տ՟ն մերոյ և փրկչին յ՟ի ք՟ի։
Եւ զբաժակ օրհ✠նեալ արիւն ստուգապէս
արարեր տ՟ն մերոյ և փրկչին յ՟ի ք՟ի։
Որով զհաց և զգինի օրհ✠նեալ մարմին և

արիւն ճշմարտապէս արարեր տն մերոյ և փրկչին յսի քսի՝ փոխարկելով հոգւովդ քով սրբով:

Երիցս անգամ կրկնեսցէ զաղօթս. և սարկաւագն 'ի ցած, Ամէն:

Եւ քահանայն ասասցէ 'ի ձայն:

Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս յանդատապարտութի՟ 'ի քաւութի՟, և 'ի թողութի՟ մեղաց:

Եւ ապա տարածեալ զձեռսն աղօթեսցէ 'ի ծածուկ:

Սովաւ շնորհեա զսէր զհաստատութիւն, և զըղձալի զխաղաղութի՟ ամենայն աշխարհի. սրբոյ եկեղեցւոյ, և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւագաց, թագաւորաց աշխարհի, իշխանաց, ժողովրդոց, ճանապարհորդելոց, նաւելոց, կապելոց, վտանգելոց, աշխատելոց, և որք 'ի պատերազմունս բարբարոսաց:

Սովաւ և օդոց շնորհեա զբարեխառնութի՟, և անդոց զպտղաբերութի՟, և ախտացելոց 'ի պէսպէս ցաւս փութապէս զառողջութի՟:

Սովաւ հանգո՛ զամենեսեան յառաջագոյն 'ի քն ննջեցեալսն՝ զեպիսկոպոսունս՝ զերիցունս՝ զսարկաւագունս՝ և զընաւ ուխտ եկեղեցւոյ քում սբյ, և զամենեսեան՝ որք յաշխարհական կարգէ զարս և զկանայս հաւատով վախճանեալս:

’Ի ձայն ։

Ընդ որս և մեզ այց արասցես՝ բարերար ա̃ծ
աղաչեմք ։

Ժողովուրդն ։ Յիշեա՛ տ̃ր և ողորմ ։

Քահանայն ։

Ընծայելին սրբոյ կուսին մարիամու, և յով-հաննու մկրտչին, ստեփաննոսի նախավկային, և ամենայն սրբոց՝ եղիցի յիշատակ ’ի ս̃բ պատարագս աղաչեմք ։

Ժողովուրդն ։ Յիշեա՛ տ̃ր և ող ։

Սարկաւագն յաջակողմն սեղանոյն՝ ձեռնամած ասասցէ ։

Առաքելոց սրբոց, մարգա ։

Եւ մինչ սարկաւագն զքարոզն ասիցէ, քահանայն զաղօթս ասասցէ. որ է ’ի մասին աւարտելոյն ։

Յիշեա՛ տ̃ր և ողորմեա՛, և օրհնեա՛ զս̃բ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի քո, զոր փրկեցեր պատուական արեամբ միածնի քոյ, և ազատեցեր խաչիւն սրբով. շնորհեա՛ սմա զանշարժ զխաղաղութիւն ։
Յիշեա՛ տ̃ր և ողորմեա՛ և օրհնեա՛ զամենայն ուղղափառ եպիսկոպոսունս, որք ուղիղ վարդապետութեամբ համառօտեն ’ի մեզ զբանն ճշմարտութեան ։

Ապա յետ յիշելոյն զՊապին, յիշեսցէ եւ առաջնորդն տեղւոյն ըստ պատշաճի՝ եւ պատուոյն, թէ Պատրիարք իցէ, թէ Արքեպիսկոպոս իցէ, եւ թէ եպիսկոպոս իցէ։ Ապա Կաթողիկոսն, եւ կամ Եպիսկոպոսն Հայոց՝ եթէ իցէ հերետիկոս, կամ հերձուածօղ՝ մի երբեք, եւ մի ուրեք յիշեսցի։ Իսկ եթէ իցէ ուղղափառ, յիշեսցի զայն 'ի թեմ, եւ 'ի վիճակի իւրում, եւ մի երբեք արտաքոյ նորին։

'Ի ձայն։

*Նաեւ առաւել զսրբազան Պապն մեր՝ զՏէր այս անուն։ Եւ զերջանիկ պատրիարքն մեր՝ զՏէր այս անուն։ Կամ զարքեպիսկոպոսն մեր՝ զՏէր այս անուն։ Կամ զեպիսկոպոսն մեր՝ զՏէր այս անուն։ Շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութիւն։*

Սա ապա 'ի ձախակողմն սեղանոյն կարդասցէ սարկաւագն յիշատակ աղօթից։ Որ մի ոչ մատուցածին կարծեցեալ զրկեալ է, զի մեծին խորհրդոյ է արժանացեալ շնորհաց օրհնային։

*Գոհութիւն եւ փառաբանութիւն։*

Սա ընդ սկսանել սարկաւագին զքարոզս, խոնարհեալ աղօթս ասասցէ, զի 'ի միասին տաղերգեսցեն։

*Յիշեա Տէր եւ ողորմեա եւ օրհնեա զքո առաջի կացեալ ժողովուրդս, եւ զպատարագիս մատուցօղս, եւ պարգեւեա սոցա զպիտոյսն եւ զօգտակարսն։*

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛ և օրհնեա՛ զուխտաւորս և զպտղաբերիչս եկեղեցւոյ քոյ սրբոյ. և որք յիշեն զաղքատս ողորմածութեամբ, և հատո՛ նոցա զպարտս նոցա՝ ըստ ընդարքոյս առատութեան քոյ՝ հարիւրապատիկ աստ՝ և 'ի հանդերձելումն:

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛, և գթա՛ 'ի հոգիս հանգուցելոցն, հանգո՛ զնոսին, և լուսաւորեա՛, և դասաւորեա՛ ընդ սրբս քո յարքայութեանդ երկնից, և արժանի արա ողորմութեամբ քում:

Յիշեա՛ Տէր և զհոգի ծառայի քոյ. այս անուն. և ողորմեա՛ նմա ըստ մեծի ողորմութեամբ քում, և հանգո՛ այցելութեամբ 'ի լոյս երեսաց քոց: Եւ ԵԹԷ ԿԵՆԴԱՆԻ Է, փրկեա՛ զնա յամենայն որոգայթից հոգւոյ և մարմնոյ:

Յիշեա՛ Տէր և զայնոսիկ՝ որք յանձնեցին մեզ յիշատակել յաղօթս՝ զկենդանիս և զհանգուցեալս. կառավարեա՛ զկամս հայցմանց նոցա և զմերս՝ ընդ ուղղորդն, և որ լին է փրկութեամբ: Եւ վարձատրեա՛ բոլորեցունց զանանց և զերանելի բարութիւնդ: Եւ զտեալ զխորհուրդս մեր տաճարացն յընդունակութիւն մարմնոյ և արեան միածնի քոյ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի: Ընդ որում քեզ հօր ամենակալի՝ հանդերձ կենդանարար և ազատիչ սուրբ հոգւովդ՝ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Քահանայն դարձեալ և խաչակնքեալ զժողովուրդն՝ ասէ բարձր ։

Եւ եղիցի ողորմութիւն մեծին ա̄յ ; և փրկչին մերոյ յ̄ի ք̄ի ✠ ընդ ձեզ՝ ընդ ամենեսեան ։

Ժողովուրդն ։ Եւ ընդ հոգւոյդ քում ։
Սարկաւագն ։ Եւս խաղաղութեան ։
Ժողովուրդն ։ Տ̄ր ողորմեա ։
Սարկաւագն ։ Ամենայն սրբովք զորս ։

Եւ անդէն ընդ ժողովրդեանն՝ քահանայն բազկատարած խորհրդաբար աղօթեսցէ ՚ի ծածուկ ։

Ա̄ծ ճշմարտութեան, և հայր ողորմութեան գոհանամք զքէն․ որ ՚ի վեր քան զհրամանելի նահապետացն՝ զմեր պարտաւորեցելոցս առաւել մեծարեցեր զբնութիւն ։ Վասն զի նոցա ա̄ծ կոչեցար, իսկ մեզ հայր հաճեցար անուանիլ գթալով ։ Եւ այժմ տ̄ր աղաչեմք զքեզ՝ զայսպիսի առ ՚ի քէն զնորոգ և զպատուական անուանադրութեանս շնորհ՝ օր ըստ օրէ պայծառացուցեալ ծաղկեցո ՚ի մէջ եկեղեցւոյ քում սրբոյ ։

՚Ի ձայն ։

Եւ տուր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր, կարդալ զքեզ երկնաւոր հայր, երգել և ասել ։

Եւ ժողովուրդն բազկատարած եղանակեսցեն ։

Հայր մեր, որ յերկինս ես ։

Եւ մինչ նոքա երգեսցեն՝ քահանայն աղօթեսցէ ՚ի ծածուկ :

Տ̃Ր տ̃րանց, ա̃ծ աստուծոց, Թագաւոր յաւիտենական, արարիչ ամենայն արարածոց, հայր տ̃ն մերոյ յ̃ի ք̃ի, մի տար զմեզ ՚ի փորձութիւն, այլ փրկեա ՚ի չարէ, և ապրեցո ՚ի փորձութենէ :

՚Ի ձայն :

Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս . Ամէն :

Քահանայն .

Խաղաղութիւն ✠ ընդ ամենեսեան .

Ժողովուրդն : Եւ ընդ հոգւոյդ քում :
Սարկաւագն : Ա̃յ երկրպագեսցուք :
Ժողովուրդն : Առաջի քո տ̃ր :

Քահանայն խոնարհեսցի և ամենայն ժողովուրդն ընդ նմա ՚ի վայր, և քահանայն աղօթեսցէ ՚ի ծածուկ :

Որ աղբիւրդ ես կենաց, և բղխումն ողորմութեան հեղեղ սուրբ, ողորմեա ժողովրդեանս, որք խոնարհեալ երկրպագանեն մեծութեանդ քո : Պահեա զսոսա ամբողջս : Տպաւորեա յոգւոջ սոցա զձև մարմնոյ ցուցակի՝ առ ՚ի ժառանգութիւն և ՚ի վիճակ հանդերձելոցդ բարեաց :

Ի ձայն.

Քրիւ Յսիւ Տռամբ մերով, ընդ որում քեզ հոգւոյդ սրբոյ և Հօր ամենակալի վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Եւ քահանայն առեալ զՍբ հացն 'ի ձեռս, ասէ առաջին ձայնեալ բարձր:

Պռօսխումէ:

Եւ քահանայն բարձրացուցանէ ակներև ժողովրդեանն՝ և ասասցէ:

Ի սրբութիւն սրբոց:

Ժողովուրդն բարձր ձայնիւ:

Միայն Սբ, միայն Տր, Յս Քս, 'ի փառս Այ Հօր. Ամէն:

Քահանայն:

Օրհնեալ Հայր Սբ Ած ճշմարիտ.
Ժողովուրդն: Ամէն.

Քահանայն:

Օրհնեալ որդին Սբ Ած ճշմարիտ.
Ժողովուրդն: Ամէն:

Քահանայն :

Օրհնեալ Հոգին սբ՟ ած՟ ճշմարիտ.
Ժողովուրդն : Ամէն :

Քահանայն :

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն :

Դպիրքն : Հայր սուրբ, Որդի.

Եւ մինչ նոքա երգիցեն զայս, քահանայն խնկարկեսցէ, և աղօթեսցէ ՚ի ծածուկ :

Նայեաց տէր մեր յս՟ քս՟ յերկնից ՚ի սրբութենէ քումմէ, և յաթոռոյ փառաց թագաւորութեան քո : Եկ ՚ի սրբել և ՚ի կեցուցանել զմեզ. որ ընդ Հօր նստիս, և աստ պատարագիս : Արժանի արա տալ մեզ յանարատ մարմնոյ քումմէ, և ՚ի պատուական յարենէ. և ՚ի ձեռս մեր ամենայն ժողովրդեանս :

Եւ զայս ասասցէ երկրպագելով՝ և համբուրեսցէ զսեղանն, և առեալ զսբ՟ մարմինն ողջ թացցէ յանապական արեանն, և ասասցէ :

Տր՟ ած՟ մեր, որ կոչեցեր զմեզ յանուն միածնի որդւոյ քո քրիստոնեայս, և շնորհեցեր մեզ մկրտութիւն հոգևոր աւազանաւն ՚ի թողութիւն մեղաց, և արժանի արարեր զմեզ

հաղորդիլ սբ մարմնոյ և արեան միածնի քո: Եւ այժմ աղաչեմք զքեզ Տր, արա զմեզ արժանի ընդունել զսուրբ խորհուրդս զայս մեզ 'ի մեղաց թողութիւն: Եւ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ որդւոյ և սբ հոգւոյդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Եւ Եպիսկոպոսն առնելով ծաղկեփնջեանն, և տալով առ նոսա Եպիսկ:

Ի սբ 'ի սբ պատուական մարմնոյ և յարենէ Տն մերոյ և փրկչին յսի քսի, Ճաշակեսցուք սրբութեան, որ իջեալ 'ի յերկնից բաշխի 'ի մէջ մերում: Սա է կեանք ✠, յոյս, յարութիւն, քաւութիւն, և թողութիւն մեղաց: Սաղմոս ասացէք Տն Այ մերոյ, սաղմոս ասացէք երկնաւոր թագաւորիս մերոյ անմահի, որ նստի 'ի կառս քերովբէականս:

Սարկաւագն յայտնեալ Եպիսկ:
Սաղմոս ասացէք Տն Այ:

Դպիրքն եղանակեսցեն:

Քս պատարագեալ բաշխի:

Մինչ նոքա երգեսցեն, ժողովուրդն առցէ ղօղանսն 'ի ձեռն, և համբուրեսցեն աղօթելով աւետիս զայս:

Ո՛ր օրհնութիւն, կամ զո՛ր գոհութիւն 'ի վերայ հացիս և բաժակիս ասասցուք, այլ յս

զքեզ միայն օրհնեմք՝ համանդերձ Հարբդ և ա-
մենասուրբ Հոգւովդ. այժմ և միշտ, և յաւի-
տեանս յաւիտենից. Ամէն։

Դարձեալ ասասցէ։

Խոստովանիմ և հաւատամ, զի դու ես Քս որ-
դի այ, որ բարձեր զմեղս աշխարհի։

Եւ ընկեալ արկցէ ՚ի բաժակն արեան՝ ասելով։

Լրումն Հոգւոյն սրբոյ։

Եւ ապա առեալ զՍբ մասն ՚ի ձեռս իւր, ասասցէ ՚ի
ծածուկ արտասուօք և գոհութեամբ առ Հայր։

Հայր սբ, որ անուանեցեր զմեզ անուա-
նակցութբ միածնի քո, և լուսաւո-
րեցեր մկրտութբ հոգևոր աւազա-
նին։ Արժանի արա ընդունել զսուրբ
խորհուրդս զայս մեզ ՚ի մեղաց թողութիւն։
Տպաւորեա ՚ի մեզ զշնորհս հոգւոյդ սրբոյ՝ որ-
պէս ՚ի սուրբ առաքեալսն, որք ճաշակեցին,
և եղեն մաքրիչք ամենայն աշխարհի։ Եւ
արդ՝ տր Հայր բարերար՝ զհաղորդութիւնս
զայս մասնաւորեա ճաշակման երեկոյին աշա-
կերտացն՝ բառնալով զխաւար մեղաց իմոց։
Մի հայիր յանարժանութիւնս իմ. և մի ար-
գելուր զշնորհս հոգւոյդ սբ։ Այլ ըստ ան-
բաւ մարդասիրութեան քո՝ պարգևեա զսա

քաւիչ մեղաց, լուծիչ յանցանաց։ Որպէս խոստացաւ և ասաց տր̃ մեր յս̃ քս̃, թէ որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, կեցցէ յաւիտեան։ Արդ՝ արա զսա մեզ ՚ի քաւութիւն, զի որք կերիցեն և արբցեն ՚ի սմանէ, հանցեն զօրհնութիւն և զփառս հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Խաղաղութի̃ ✠ ընդ ամենեսեան։

Գոհանամ զքէն քս̃ թագաւոր, որ արժանի արարեր զիս զանարժանս հաղորդիլ տր̃ մարմնոյ և արեան քոյ։ Եւ այժմ տր̃ աղաչեմ ըզքեզ, մի լիցի սա ինձ ՚ի դատապարտութիւն, այլ ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց, յառողջութիւն հոգւոյ և մարմնոյ, և ՚ի կատարումն ամենայն գործոց առաքինութեան։ Որպէս զի սրբեսցէ սա զշունչս իմ, զհոգի և զմարմին իմ. և արասցէ զիս տաճար և բնակարան ամենասուրբ երրորդութեանդ։ Զի ընդ սուրբս քո արժանի եղէց փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Յովհաննու Ոսկեբերանին։

Գոհանամ և մեծացուցանեմ և փառաւորեմ զքեզ տր̃ ած̃ իմ, զի զիս զանարժանս արժանացուցեր յաւուրս յայսմիկ՝ հաղորդակից լինել ած̃ային և սոսկալի խորհրդոյ քոյ, անարատ մարմնոյդ և պատուական արեանդ։

Սամն այսորիկ զոսա 'ի բարեխօսութիւն ու-
նելով, աղաչեմ զամենայն աւուրս և 'ի ժա-
մանակս կենաց իմոց՝ ընդ սրբութեան քոյ
պահեա զիս։ Որպէս զի յիշելով զբարեգթու-
թիւնս քո, և կենդանի լինել ընդ քեզ՝ որ
վասն մեր չարչարեցար և մեռար և յարեար։
Ո՛վ մերձեցի տ՟ր իմ և ա՟ծ խորտակիչն՝ կըն-
քելով անձին իմոյ պատուական արեամբդ-
քով։ Ամենակարօղ՝ մաքրեա զիս սուրբ յա-
մենայն մեռելոտի գործոց իմոց, որ միայնդ
ես անմեղ։ Ամրացո զկեանս իմ տ՟ր յամենայն
փորձութենէ. և զպատերազմօղն իմ դարձո
յետս պատկառեալ և ամաչեցեալ, որչափ
յառնէ 'ի վերայ իմ։ Ամրացո զզգայս մտաց
և լեզուի իմոյ, և զամենայն ճանապարհս
մարմնոյ իմոյ։ Լեր համապաղորդ ընդ իս
ըստ անսուտ խոստմանց քոց, թէ որ ուտէ
զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, նա յիս
բնակեսցէ՝ և ես 'ի նմա։ Դու ասացեր մար-
դասէր, կացո զբանս ա՟ծային անլուծանելի
հրամանաց քոց։ Քանզի դու ես ա՟ծ ողորմու-
թեան և գթութեան և մարդասիրութեան,
և պարգևիչ ամենայն բարեաց. և քեզ վայել
է փառք հանդերձ հարբդ և ամենասուրբ
հոգւովդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յա-
ւիտենից. Ամէն։

Եւ ապա [illegible] [illegible], և խնդրեսցէ 'ի ճշմարտէն Այ զըղձալիս հայցուածս անձին իւրոյ՝ և ժողովրդեան և աշխարհի. և թողութ̃ն խնդրեսցէ իւրոց յանցաւորացն թշնամեաց և ատելեաց ։ Եւ ապա անդէն ահիւ և դողութեամբ ճաշակեսցէ 'ի մարմնոյն, և արբցէ 'ի բաժակէն՝ ասելով ։

Մարմին քո անապական լիցի ✠ ինձ 'ի կեանս ։ Եւ սուրբ արիւն քո 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց ։

Եւ թէ սարկաւագ կայցէ, հաղորդեսցի և նա ։ Եւ ապա սարկաւագն զսկիհն, և դարձցի առ ժողովուրդն ասելով բարձր ։

Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք ։

Ժողովուրդն ասասցէ բարձր ձայնիւ ։

Ա̃ծ մեր և Տ̃ր մեր երևեցաւ ։

Եւ հաղորդեսցի նոր ընծայեալն, եթէ ոք 'ի ներքոյ, այլ 'ի յետին դասն զորհրդութեանն ։ Եւ ամենայն արժանաւոր ժողովուրդն հաղորդեսցին ։ Եւ յետ հաղորդելոյն խաչակնքեսցէ զժողովուրդն և ասասցէ բարձր ։

Կեցո Տէր ✠ զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւն քո, հովուեա և բարձրացո զսոսա՝ յայսմհետէ մինչև յաւիտեան ։

Եւ յետ հաղորդութեան երգեսցեն ժողովուրդն ։

Լցաք 'ի բարութ̃ց քոց ։

Քահանայն ։

Գոհանամք զքէն Հայր ամենակալ, որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ սուրբ զեկեղեցի, տաճար սրբութեան, ուր փառաւորանի սուրբ երրորդութիւնդ ։ Ալէլուիա ։
Գոհանամք զքէն Քրիստոս թագաւոր, որ պարգևեցեր մեզ կենդանութիւն կենարար մարմնով և արեամբդ քով սրբով ։ Ալէլուիա ։
Գոհանամք զքէն Հոգիդ Ճշմարիտ, որ նորոգեցեր սուրբ զեկեղեցի . անարատ պահեա հաւատով երրորդութեանդ՝ յայսմհետէ մինչև յաւիտեան ։ Ալէլուիա ։

Սարկաւագն ։ Եւ ևս խաղաղ ։ Եւ ևս հաւատով ընկալ ։
Ժողովուրդն ։ Գոհանամք զքէն ։

Եւ քահանայն ասասցէ ՚ի ծածուկ ։

Գոհանամք զքէն Քրիստոս Աստուած, որ զայսպիսի ճաշակումն բարութեան շնորհեցեր մեզ ՚ի սրբութիւն կենդանութեան ։ Սովիմբ պահեա զմեզ սուրբ և անարատ՝ բնակեալ զմեօք քո աստուածային խնամօքդ ։ Հովուեա զմեզ յանդաստանի կամաց քոց սրբոց, և բարերարաց ։ Որով ամրացեալք յամենայն բանսարկուին ընդդիմութեանց, քումդ եւեթ արժանի եղիցուք լսել ձայնի ։ Եւ քեզ միայնոյ քաջայաղթ, և ճշմարիտ հովուիդ հետևել, և առ ՚ի քէն ընդունել զպատրաստեալ տեղի յարքայութեանդ երկնից, Աստուած մեր և Տէր և փրկիչ Յիսուս Քրիստոս ։ Որ

ես օրհնեալ ընդ Հօր, և ընդ սրբոյ Հոգւոյդ այժմ, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Խաղաղութիւն ✠ ընդ ամենեսեան։

Անքննելի, անհաս, երրեակ ինքնութենդ, հաստիչ՝ ընդունող և անբաժանելի միասնական սուրբ երրորդութեանդ, վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Եւ ապա առցէ զաւետարանն որ 'ի ձեռն էր, և երկրպագեալ համբուրեսցէ զսեղանն։ Եւ իջեալ 'ի դէմ եկեղեցւոյն, ասասցէ զաղօթսն։

'Ի ձայն։

Որ օրհնես զայնոսիկ, որք օրհնեն զքեզ Տ՟ր, և սուրբ առնես զյուսացեալս 'ի քեզ։ Կեցո զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւնս քո։ Զլրումն եկեղեցւոյ քոյ պահեա։ Սրբեա զնոսա, որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քոյ։ Դու զմեզ փառաւորեա ա՟ծային զօրութեամբ քով։ Եւ մի թողուր զյուսացեալս 'ի քեզ։ Զխաղաղութիւն քո պարգևեա ամենայն աշխարհի, եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քրիստոնէից, և զինուորեալ մանկանց նոցա, և ամենայն ժողովրդեանս։ Զի ամենայն տուրք բարիք, և ա՟մ պարգևք կատա-

րեալք 'ի վերուստ են իջեալ առ 'ի քէն, որ ես Հայր լուսոյ ։ Եւ քեզ վայել է փառք իշխանութի̃ և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ․ Ամէն ։

Եւ ժողովուրդն ասասցեն երեք անգամ ։

Եղիցի անուն Տ̃ն օրհնեալ ։

Եւ քահանայն դարձցի առ ժողովուրդն, և ասասցէ 'ի ձայն ։

Կատարումն օրինաց և մարգարէից դու ես Ք̃ս Ա̃ծ փրկիչ մեր ։ Որ լցեր զամենայն Հայրակամ տնօրէնութիւնս քո ։ Լցո̀ և զմեզ Հոգւովդ քով սրբով ։

Սարկաւագն ․ Օրթի ։

․Քահանայն ։

Խաղաղութիւն ✠ ամենեցուն ։

Ժողովուրդն ։ Եւ ընդ հոգւոյդ քում ։
Սարկաւագն ։ Երկիւղածութ̃բ լուարուք ։

# ՍՐԲՈՅ ԱՒԵՏԱՐԱՆԻՍ ՈՐ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

## 'Ի հօրէն լուսոյ։

Ի սկզբանէ էր բանն. եւ բանն էր առ ա՟ծ. եւ ա՟ծ էր բանն։ Սա էր 'ի սկզբանէ առ ա՟ծ։ Ամենայն ինչ նովաւ եղեւ, եւ առանց նորա եղեւ եւ ոչինչ՝ որ ինչ եղեն։ Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան. եւ լոյսն 'ի խաւարի անդ լուսաւորէ, եւ խաւար նմա ոչ եհաս։ Եղեւ այր մի առաքեալ յա՟յ. անուն նմա Յովհաննէս։ Սա եկն 'ի վկայութիւն՝ զի վկայեսցէ վասն լուսոյն. զի ամենեքին հաւատասցեն նովաւ։ Ո՛չ էր նա լոյսն. այլ զի վկայեսցէ վասն լուսոյն։ Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ։ Յաշխարհի էր, եւ աշխարհ նովաւ եղեւ. եւ աշխարհ զնա ոչ ծանեաւ։ Յիւրսն եկն, եւ իւրքն զնա ոչ ընկալան։ Իսկ որք ընկալանն զնա՝ ետ նոցա իշխանութիւն որդիս ա՟յ լինել՝ որոց հաւատասցեն յանուն նորա. որք ոչ յարենէ եւ ոչ 'ի կամաց մարմնոյ եւ ոչ 'ի կամաց առն, այլ յա՟յ ծնան։ Եւ բանն մարմին եղեւ՝ եւ բնակեաց 'ի մեզ. եւ տեսաք զփառս նորա՝ զփառս իբրեւ զմիածնի առ 'ի հօրէ, լի շնորհօք եւ ճշմարտութեամբ։

# ՍՐԲՈՑ ԱՒԵՏԱՐԱՆԻՍ ՈՐ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Յետ յարութեան տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի ։

Եւ երբեւ ճաշեցին, ասէ ցսիմոն պետրոս յ՟ս. սիմոն յովնանու սիրես զիս առաւել քան զդոսա ։ ասէ ցնա. այո՛ տէր, եւ դու գիտես՝ զի սիրեմ զքեզ ։ ասէ ցնա՝ արածեա՛ զգառինս իմ։ Դարձեալ ասէ ցնա, սիմոն յովնանու սիրես զիս ։ ասէ ցնա. այո՛ տէր եւ դու գիտես զի սիրեմ զքեզ. ասէ ցնա՝ արածեա՛ զոչխարս իմ։ Ասէ ցնա երիցս անգամ. սիմոն յովնանու սիրես զիս. տրտմեցաւ պետրոս, զի ասաց ցնա երիցս՝ թէ սիրես զիս. եւ ասէ ցնա. տէր՝ դու զամենայն գիտես. եւ դու իսկ զամենայն ճանաչես, եւ եթէ սիրեմ զքեզ. ասէ ցնա յ՟ս. արածեա՛ զոչխարս իմ։ Ամէն ամէն ասեմ քեզ. զի մինչ մանուկն էիր, անձամբ անձին գօտի ածէիր՝ եւ երթայիր յո՛ եւ կամէիր. եւ յորժամ ծերասցիս, ձեռս ՚ի վեր կալցես. եւ այլք ածցեն քեզ գօտի, եւ տարցին՝ ուր ոչն կամիցիս ։ Զայս ասաց՝ նշանակել թէ որով մահու փառաւոր առնիցէ զա՟ծ ։ եւ զայս իբրեւ ասաց, ասէ ցնա, Եկ զկնի իմ։

Սարկաւագն ։ Ս՟բ խաչիւս աղա ։

Քահանայն ։

Պահպանեա զժողովուրդս քո քս ։

Ժողովուրդն ։ Օրհնեցից զտր յամենայն ժամ ։

Ապա քահանայն խաղաղականեսցէ զժողովուրդն, և ասասցէ բարձր ։

Օրհնեալք ✠ եղերուք ՚ի շնորհաց ՚սբ. հոգ-ւոյն, երթայք խաղաղութբ. և տր եղիցի ընդ ձեզ ը ամենեսեան. Ամէն ։

Ապա դպիրքն ասասցեն զսաղմոսն. ԼԳ ։

Ի տէր պարծեսցի անձն իմ ։

Ապա ընդ սաղմոսելն՝ բաշխեսցէ նշխար ժողովրդեանն ։ Ապա յառաջագոյն դարձցի քահանայն յարևելս, երկրպա-գեսցէ առաջի սեղանոյն, և ասասցէ ։

Տր ած յս քս ողորմեա ինձ ։

Ապա մտեալ յաւանդատունն՝ մերկասցէ ՚ի զգեստուցն ։ Ապա եկեալ առաջի սեղանոյն, երկրպագեսցէ երիցս, և եր-թիցէ խաղաղութեամբ ։

# ԱԼԵԼՈՒԻԱՅՔ

Ա՟ծայայտնութեան Ճրագալուցին :

Հոգին ս՟բ. եկեսցէ ՚ի քեզ. և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ՚ի վերայ քո :

Ճն. ա̅ : Այսօր ծնաւ որ ՚ի հօրէ յառաջ քան զյաւիտեանս որդի. որ է օծեալ տ՟ր ՚ի քաղաքի դաւթի. ՚ի վայելչութիւն ս՟ց քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ :

Ստեփաննոսի :

ա̅ : Հոգւով ս՟բվ զօրացեալ ս՟բ ստեփաննոս, և ընտրեալ յորովայնէ, Ճշմարիտ վկայ. սիրող և առաքեալ առաքելոյն, ՚ի ք՟նէ ընկալար զուարթնոյն զպսակն :

բ̅ : Կարապետն յովհաննէս զարհուրեալ յորովայնէ յորովայն երկրպագէր. սպասաւոր եղև բանին ա՟յ. և լուեալ զահաւոր զձայնն աղաղակէր ասելով. ահա գառն ա՟յ որ բառնայ զմեղս աշխարհի :

գ̅ : Ուրախ լեր բերկրեալդ տ՟ր ընդ քեզ. օրհնեալ ես դու ՚ի կանայս և օրհնեալ է պտուղ որովայնի քո :

դ̅ : Դու մանուկ, մարգարէ բարձրելոյն կոչեսջիր. գնասցես առաջի տ՟ն պատրաստել զճանապարհս նորա :

Է։ Եհան զիս 'ի դրոյ տառապանաց 'ի կաւոյ և 'ի տղմոյ։

Ը։ Երդուաւ տ̄ր դաւթի ճշմարտութբ̄, և ոչ ստեաց նմա 'ի պտղոյ յորովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա։

Թ։ Ուրախ լիցին երկինք, և ցնծասցէ երկիր. զուարճասցի ծով լրիւ իւրով, տիեզերք և ամենայն բնակեալքն 'ի նմա։

Ծննդեան յովհաննու կարապետին։

Կարապետն յովհաննէս զարհուր" էն։

Տեառնընդառաջին։

Արդ արձակես զծառայս քո տ̄ր ըստ բանի քում 'ի խաղաղութիւն՝ զի տեսին աչք իմ զփրկողդ ա̄ծ։

Ա. [illegible]։

կէր։ Գովեա երուսաղէմ զտ̄ր և օրհնեա զա̄ծ քո սիոն։

բ̄ղ։ Գովեա երուսաղէմ զտ̄ր և օրհնեա զա̄ծ քո սիոն։

գ̄ղ։ Տէր 'ի զօրութե̄ քում ուրախ եղիցի թագաւորն. 'ի փրկութե̄ քում ցնծասցէ յոյժ։

դ̄ղ։ Քեզ վայելէ օրհնութիւն ա̄ծ 'ի սիոն և քեզ տացին աղօթք յերուսաղէմ։

ե̄ղ։ Տէր ո՞վ կացցէ 'ի խորանի քում. կամ ո՞վ բնակեսցի 'ի լերան ս̄ր քո։

—ր։ Տէր թագաւորեաց զվայելչութի̄ զգեցաւ. զգեցաւ տ̄ր զօրութիւն ընդ մէջ իւր էած։

ղբ։ Ցնծացէք առ ա̄ծ օգնական է մեր. աղաղակեցէք առ աստուած յակոբայ։

### Մաղթանք ձայն համբարձման :

Համբարձէ՛ք իշխանք զդրունս ձեր ՚ի վեր. համբարձցին դրունք յաւիտենից, և մտցէ թագաւոր փառաց :
Համբարձաւ ա̄ծ օրհնութե̄բ և տ̄ր մեր ձայնիւ փողոյ :

### Մաղթանք ձայն հոգւոյն ս̄բյ :

Ճէր : Ողորմութե̄բ տ̄ն լի եղև երկիր. և բանիւ տեառն երկինք հաստատեցան. և հոգւովն բե-րանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա :
Է̄ղ : Ձայն տ̄ն ՚ի վ̄ր ջուրց. և ա̄ծ փառաց ո-րոտաց, և տ̄ր ինքն ՚ի վերայ ջուրց բազմաց :
Գ̄ղ : Որպէս իւղ զի իջանէ ՚ի գլուխ և ՚ի մո-րուսն Ահարոնի. և ՚ի մօրուացն իջանէ ՚ի գրապանս զգեստու նորա :
Պ̄ղ : Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն ա̄յ. և տ̄ր արար զյարկս իւր բարձրեալն :
Ե̄ղ : Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ՚ի յերկիր ուղիղ :
Ուր : Յիշեա́ տ̄ր զԴաւիթ և զամենայն հե-զութիւն նորա :
ՂԲ : Ամբարձան գետք տ̄ր. և ամբարձին գետք զձայնս իւրեանց. և յարիցեն գետք ՚ի գնացս իւրեանց :

### Մաղթանք ձայն յարութե̄ :

Աջ : Դու յարուցեալ գթասցիս ՚ի վ̄ր սիոնի, ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ.

աէ : Օրհնեսցէք զՏէր յօրհնութիւն 'ի նոր, օրհ-
նութիւն նմա յեկեղեցիս սրբց :

բյ : Ծափս հարէք ամ հեթանոսք, աղաղա-
կեցէք առ ած 'ի ձայն ցնծութեն :

բէ : Արի տէր ած իմ 'ի հրամանս քո, զոր
պատուիրեցեր. և ժողովք ժողովրդոց շուրջ
եղիցին զքև. վասն այսորիկ 'ի բարձունս դարձ
տր :

գյ : Ուրախ եղև իսրայէլ յարարիչ իւր. որ-
դիք սիոնի ցնծասցեն 'ի թագաւորն իւ-
րեանց :

գէ : Եկայք և տեսէք զգործս այ, որպէս զի
ահեղ են խորհրդովք քան զամենայն որդւոց
մարդկան :

դյ : Հաճեցար տր ընդ երկիր քո, և դարձու-
ցեր զգերութիւն յակոբայ :

դէ : Յարեաւ ած, և ցրուեսցին ամենայն թշ-
նամիք նորա. փախեան ատելիք նորա յերե-
սաց նորա :

Մեղեդի ճաշու Վարդավառին :

ձէր : Մինչ լուսաւոր հովանի լինէր նց. ձայն
եղև յամպոյն որ ասէ. դա է որդի իմ սիրելի
ընդ որ հաճեցայ :

ճղ : Բարձրութիւնք լերանց նորա են, նորա է
ծով՝ և նա արար զնա, և զցամաք ձեռք նորա
ստեղծին. եկայք երկիրպագցուք նմա. անկ-
ցուք և լացցուք առաջի տն արարչին մերոյ :

ֆղ : Քո են երկինք և քո է երկիր, զաշխարհս
լրիւ իւրով դու հաստատեցեր. զհիւսիս և
զհարաւ դու արարեր. թաբոր և հերմոն յա-
նուն քո ցնծասցեն :

Միջնորդայք ճաշու վերափոխման, և տաղաւարին :

Ձէր : Արի՛ Տէր 'ի հանգիստ քո . դու և տա-
պանակ կտակի սրբութեան քոյ :

Բղ : Ողորմեա՛ մեր բեր" :

Ձձ : Այսօր ծնաւ որ 'ի հօրէ էն :

Գղ : Ողորմեա լիցին երկինք :

Միջնորդայք ճաշու նաւակատեաց խաչի և եկեղեցւոյ :

ՂԲ : Ընտրեաց Տէր զսիոն . և ընտրեաց բնա-
կել 'ի նմա . ասէ՝ այս է հանգիստ իմ յաւի-
տեանս յաւիտենից . 'ի սմա բնակեցայց . զի
հաճեցայ ընդ սա :

Ձէր : Տո՛ւր զօրութիւն ծառայի քոյ . կեցո՛ զոր-
դի աղախնոյ քոյ . և արա՛ առիս զնշան բա-
րութեան :

Բղ : Նշաւոր երկիւղածաց քոց նշան . զի ապ-
րեսցին յերեսաց աղեղան :

Գղ : Տէր սիրեցի զվայելչութիւն տան քոյ . և
զտեղի յարկի փառաց քոց :

Դղ : Տէր 'ի տաճար սուրբ իւրում, Տէր յեր-
կինս յաթոռ իւրում :

Եղ : Որպէս սիրելի են յարկք քո Տէր զօրու-
թեանց . ցանկայ՝ և փափագէ անձն իմ 'ի գա-
ւիթս քո . սիրտ իմ, և մարմին իմ ցնծասցէ
առ Տէ կենդանի :

աւր : Նշաւոր երկիւղածաց քոց նշան . զի ապ-
րեսցին յերեսաց աղեղան :

ՂԲ : Որպէս փրկեսցին սիրելիք քո, կեցո՛ աջով
քո, և լո՛ւր մեզ :

Մաղթանք ճաշու առաւօտու պահոց. որք ասին ըստ յաւելից:

աչ : Հոգի քո սուրբ և բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ:
չՏ: Վասն անուան քո տէր կեցուսցես զիս. արդարութեամբ քով հանցես 'ի նեղութենէ զանձն իմ:
աէ : Տէր՝ մի՛ սրտմտութբ քով յանդիմաներ զիս. և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս:
բչ : Սիրտ իմ խռովեցաւ յիս, և երկիւղ մահու անկաւ 'ի վերայ իմ:
բէ : Դարձ տր և փրկեա՛ զանձն իմ. կեցո՛ զիս տէր ըստ ողորմութեան քում:
գչ : Վասն անուան քո տր քաւեա՛ զմեղս իմ՝ զի բազում եղեն յոյժ:
գէ : Ողորմեա՛ ինձ տէր, զի հիւանդ եմ ես. բժշկեա՛ զանձն իմ՝ զի խռովեցան ոսկերք իմ:
դչ : Յիշեա՛ տէր զգթութիւնս քո և զողորմութիւնս քո, որք են յաւիտենից:
դէ : Տէր ողորմութի քոյ յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ:

Մաղթանք շաբաթապահոց:

Բղ: Եկայք ցնծասցուք 'ի տէր, աղաղակեսցուք առ ա̃ծ փրկիչ մեր:
Գղ: Երգեցէք տն երգ նոր. երգեցէք տն ամենայն երկիր. երգեցէք տն և բարձր արարէք զանուն նորա:
Եղ: Բարձր արարից զընտրեալն 'ի ժողովր-

դենէ իմմէ. գտի զդաւիթ ծառայ իմ և իւ-
ղով սրբով իմով օծի զնա։

## Ալէլուիայ աղջից կիրակէից։

Աղաղակեցէք առ տէր ամենայն երկիր, ծա-
ռայեցէք տ̃ն ուրախութեամբ։
Մտէք առաջի նորա ցնծութեամբ. ծանե-
րուք զի նա է տէր ա̃ծ մեր։

## Ալէլուիայ ճաշու մարտիրոսաց։

աձ. Տէր սիրէ զիրաւունս, և ոչ ընդ վայր
հարկանէ զ̃րբս իւր. այլ յաւիտեան պահէ
զնոսա։
կձ։ Փրկութիւն արդարոց 'ի տեառնէ է.
վերակացու է նոցա 'ի ժամանակս նեղու-
թեան։
ակ։ Պարծեսցին ս̃րբքն փառօք, և ցնծասցեն
'ի հանգիստ իւրեանց, և բարձր արասցեն զա̃ծ
բերանօք իւրեանց։
կ̄ձ։ Լոյս ծագեաց արդարոց. ուղղոց սրտից
եղև ուրախութիւն։
բձ։ Պարծեսցին ս̃րբքն փառօք և ցնծասցեն
'ի հանգիստ իւրեանց՝ և բարձր արասցեն զա̃ծ
բերանօք իւրեանց։
բկ։ Կարդացին արդարքն առ տէր՝ և տէր
լուաւ նոցա. յամենայն նեղութենէ նոցա
փրկեաց զնոսա։
գձ։ Վա̃ն քո մեռանիմք զօրհանապազ. հա-
մարեցաք որպէս զոչխար 'ի զենումն։
գկ։ Ուրախ լիցին ամենեքեան որք յուսա-

ցեալ են ՚ի քեզ. յաւիտեան ցնծասցեն և
բնակեսցիս դու ՚ի նոսա ։

ՂԱ ։ Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկես-
ցին . որպէս զմայրսն լիբանանու բազումք ե-
ղիցին ։

ԼԳ ։ Բազում նեղութիւնք են արդարոց, յա-
մենայնէ փրկէ զնոսա տէր . և պահէ զամե-
նայն ոսկերս նոցա . և մի ՚ի նոցանէ ոչ կորիցէ ։

Ալէլուիայ ձայն հրեշտակապետաց ։

Ողորմութեամբ տ̃ն լի եղև երկիր . և բանիւ
տեառն երկինք հաստատեցան . և հոգւով բե-
րանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա ։

Համօրէն մարգարէից ։

Յեկեղեցիս օրհնեցէք զա̃ծ և զտէր յաղբե-
րացն իսրայէլի ։

Պաւղոսի և յակոբայ ։

Երդուաւ տէր դաւթի ճշմարտութեամբ և
ոչ ստեաց նմա . ՚ի պտղոյ որովայնէ նորա նըս-
տուցանել յաթոռ նորա ։

Ամենայն առաքելոց ։

Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն եր-
կիր . և յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս
ազգաց ։

Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա և
մինչև ՚ի ծագս աշխարհի են խօսք նոցա ։

Նախահարցն ։

Պատմէ զբան իւր յակոբայ . զարդարութիւն
և զիրաւունս իսրայէլի ։

Գրիգորի Լուսաւորչին ։

Համբերելով համբերի տեառն. և նայեցաւ առ իս և լուաւ աղօթից իմոց ։

Հայրապետաց և Վարդապետաց ։

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. և սուրբք քո ցնծալով ցնծասցեն ։

Ճգնաւորաց ։

Երանելի են որք բնակեալ են 'ի տան տեառն. յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ ։

Կուսանաց ։

Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ 'ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ ։ Տարցին Թագաւորի կուսանք զհետ նորա և զընկերս նորա տարցին նմա ։

Թագաւորաց ։

Տէր 'ի զօրութեան քում ուրախ եղիցի Թագաւորն. 'ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ ։

Քառասնից, և Երկուց Եղբարց ։

Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր. և հաներ զմեզ 'ի հանգիստ ։

Մեծի Կիրակէին ։

Պատրաստ արարեր առաջի իմ սեղան ակն յանդիման նեղչաց իմոց ։